

Պրոֆ. ՌՈՒՍԵԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՌՈՒՍ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԺ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ ՊՈԽԵԿԻՆ**

(ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ)

ԵՐԵՎԱՆԻՄ ԿԱՐԴԱՏԱԾ ԻՐԱՎԱՐԱԿԱՅԻՆ
ՊԱՌՄԻՈՍՈՒՔՅԱՆ ՍՊԱԳՐՈՒՔՅՈՒՆՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԻՆԵՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

891.71.092 [7012412]

Հ-85

ՊՐԱՓ. ՌՈՒՍԵԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՅԻԳՎԱԾ Է 1961 թ.

ՌՈՒՍ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԺ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ ՊՈԻՇԿԻՆ

(ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Երեվանյ Կարդացած Խրաւորակային
դաստիարակչական տղագրութեանը



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1949

Проф. Р. ОГАНЕСЯН
ВЕЛИКИЙ РУССКИЙ ПОЭТ
АЛЕКСАНДР СЕРГЕЕВИЧ ПУШКИН

(На армянском языке)

Изд. Арм. Общества по распространению
политич. и научн. знаний
Ереван, 1949 г.

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՆՎԻՉ ՊՈԽԵԿԻՆ

Նվրոսպայի ազատագրութունը կգա
Ռուսաստանից:

Ա. Ս. ՊՈԽԵԿԻՆ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այս տարի հունիսի 6-ին՝ լրանում է Ա. Ս. Պուշկինի ծննդյան 150-ամյակը:

Իսկ մեծագույն կուլտուրական տոն է:

Սովետական Միության ժողովուրդները, ժողովրդական դեմոկրատիայի երկրները, աշխարհի առաջավոր մարդկության հետ միասին ստնկու են պրոգրեսի մեծագույն մարտիկներին մեկի— Ա. Ս. Պուշկինի ծննդյան 150-ամյակը:

Միայն դեմոկրատիայի և պրոգրեսի թշնամիները՝ ֆաշիստացու ահաբեկչական իմպերիալիստները կարող են նսեմացնել Պուշկինին և դիտակցարար աղճատել նրա ստեղծագործությունների սոցիալական իմաստը: Ռեակցիոնները սարսափում են Պուշկինի առաջավոր գաղափարներից: Պուշկինյան իդեաները այժմ էլ կենդանի են և պահպանում են իրենց արդիականությունը, որովհետև այդ իդեաներն ուղղված են դեպի, հակաժողովրդական սև ուժերի դեմ:

ՍՍՄԽ ժողովուրդների հետ միասին աշխարհի պրոգրեսիվ ուժերը նշելու են Պուշկինի ծննդյան տոնը, որպես մի մարդու, որին ժողովուրդները շատ բան են պարտական: Նա ֆեոդալիզմի և միապետություն խավարի մեջ փայլեց որպես կենսատու աբե, և ժողովուրդներին ապագա անխուսափելի հաղթանակի հույս ներշնչեց:

Վերջապահ է Պուշկինի դերը առանձնապես ՍՍՄԽ ժողովուրդների (նրանց թվում և հայերի) կուլտուրայի պատմության մեջ:

Այժմ թեև 150 տարի է անցել Պուշկինի աշխարհ դալուց և 112 տարի նրա ողբերգական մահից, բայց մարդկությունը նրան չի մոռացել: Այլևինչ Պուշկինը դեռ երբևէ այնքան կենդանի չի եղել ժողովուրդների հիշողության մեջ, ինչպես այսօր: Իսկ մարդու ամենամեծ կենդանությունը ժողովուրդների հիշողության մեջ մշտապես մնալն է: Պուշկինն այժմ ավելի է կենդանի, քան իր Փիղիկական կենդանության օրոք:

Նախասովետական շրջանի 120 տարիներին Պուշկինը երբևէ այնքան ժողովրդականացած չի եղել, որքան սովետական կյանքի 31 տարիներին: Պուշկինի ստեղծագործություններն այժմ թարգմանված են Սովետական Միության ավելի քան 76 ժողովուրդներ լեզուներով: Սովետական տարիներում նրա երկերն ունեցել են 300-ից ավելի հրատարակություն և տարածվել են տասնյակ միլիոնավոր օրինակներով: Նրա դրեթե բոլոր խոշոր երկերը հրաժշտականացված են: Պշխարհը լցված է պուշկինյան երգերով: Նա երկրագնդի ամենասիրված, ամենաժողովրդականացած գրողներից մեկն է: Անհնար է կուլտուրական համարել մի մարդու, որը չգիտենա Պուշկինին:

Պուշկինի փառքի այդպիսի սովետական մեր Հայրենիքում, Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությունում զեպիկ կոմունիզմ ընթացող մեր մեծ երկրում: Ով շատ է տվել ժողովրդին, նա շատ բարձր էլ գնահատվում է ժողովրդի կողմից:

Պուշկինը ուսուցող զբաղմունք լեզվի հիմքը զբն: Ըստ Բեյկոնսկու, Պուշկինը ուսուցող լեզվից հրաշք ստեղծեց: Պուշկինը, ըստ էության, հիմք զբն ուսուցող զեղարվեստական զբաղմունք, ղեպիկստական պոեզիայի, զբաղմունքի, արձակի, հեքիաթի: Նա ուսուցող զբաղմունք լեզունը բարձրացրեց համաշխարհային զբաղմունքի աստիճանին: Նա առաջին ուսուցող զեղիսկին էր, որ մարդկության զեղարվեստական միաժամ մի քայլ առաջ մղեց և տվեց համաշխարհային զբաղմունքի մեջ առաջնակարգ զեղարվեստական երկեր:

Դեռ Պուշկինի կենդանության օրով նրա երկերը թարգմանվեցին եվրոպական և արևելյան մի շարք ժողովուրդներ լեզուներով: Դեռ իր կենդանության օրով Պուշկինը թե՛ Նվրոպայում, թե՛ Արևելքում ունեւ իր երկրպագուները: Ինչպիսի՞ մարդարևությամբ էր նա կանխատեսել իր սպազան:

Ո՛հ, անվախճան եմ ես—հողիս նվիրական երգով
 Իմ աճյունից երկար կապրի ե կմնա անեղծ—
 Եվ իմ հուշակը չի հանդէշի, որքան լուսնի ներքո
 Կապրի թեկուզ մի բանաստեղծ:
 Համբաւիմ իմ Ռուսիայում անծայրածիր՝ կտարածվի,
 Ինձ կհիշի յուրաքանչյուր լեզու այնտեղ ապրող,
 Ալաւանի թողը սեզ ու ֆինն ու գեռ այսօր վայրի
 Տունդուղը ե կալմիկն ստեպ սիրող:
 Եվ ես երկար կապրեմ սիրով ժողովրդի սրտում,
 Դանի որ քնարն իմ արթնացրել է զգացումներ բարի,
 Եվ իմ դաժան դարում երգել եմ ես ազատություն
 Եվ դուր՝ հանուն ընկածների:

(Թարգմ. Ն. Զարյան)

Պուշկինի մեծությունը ավելի է աչքի ընկնում, երբ պատ-
 ձերացնում ենք թե ինչպիսի դաժան դարում հնա և նրա
 համալսոհները հանդես եկել, որքան կատաղի ե վտանգավոր են
 եղել լուսավոր գրականություն ստեղծողների թշնամիները, որոնք
 ամեն բոլոր սպառնացել են ոչնչացնել նրանց: Կուլտուրայի ե
 պրոգրեսի գահիճներին թեև հաջողվեց միապետական ֆրանսիա-
 ցու ձեռքով սպանել Պուշկինին, բայց նրանց չհաջողվեց
 ոչնչացնել Պուշկինի՝ աշխարհ զմայլեցնող վիթխարի ժառան-
 ցությունը, որը պոետի անունն անմահացնող անձեռակերտ
 ամենահոյակապ հուշարձանը դարձավ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը ծնվել է 1799 թ. հունի-
 սի 6-ին Մոսկվայում, ազնվականի ընտանիքում: Դեռևս 8 տա-
 րեկան հասակում նա սկսեց ոտառավորներ գրել: Պուշկինը պա-
 տանի էր, երբ 1811 թ. ընդունվեց Պետերբուրգի լիցեյը, ուր
 սովորեց մինչև 1817 թվականը: Նրա մտերիմ մի խումբ ընկեր-
 աներ, այդ թվում Պուշկինը, Դելվիգը, Կյուլսեյսկերը դարձան
 ազատագրական ե գրական շարժման հայտնի գործիչներ: Պուշ-
 կինը լիցեյում ավելի ինտենսիվ նվիրվեց պոեզիային ե շուտով
 դարձավ լիցեյական բանաստեղծների կենտրոնական գեմքը: 1817

թվականին, լիցեյը ավարտելուց հետո, Պուշկինը գրեց «Ազատություն» (1817 թ.), «Ձառգանքին» (1818), «Գյուղը» (1819) ոստանավորները: Այս բանաստեղծությունները ձեռագրով տարածվում էին ամբողջ Ռուսաստանում: Երիտասարդությունը հափըշտակությամբ կարդում, տարածում էր գրանք և առևտրությամբ ու ցասումով լցվում ֆեստալական հրադերի նկատմամբ: Ալեքսանդր 1-ին թագավորն իմանալով այդ ոտանավորների մասին, որոշել էր Պուշկինին աքսորել Սիբիր, բայց բանաստեղծներ ժողովակուսի և Կարամզինի միջամտությամբ շնորհիվ հեղինակի «հանցանքը» մեղմացվեց և պոետը աքսորվեց Հարավ, Կովկաս (1820—1825 թ. թ.):

Իր աքսորական կյանքը Պուշկինն անցկացրեց լրտեսների հսկողության տակ: Այդ տարիներին նա կապվեց ղեկարբրիստական շարժման պարադոքսներին՝ Պեստելի և Ռիլենկի հետ: Ավարտած լինելով «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմը, աքսորի տարիներին նա ավարտեց նաև «Կովկասի գերին», «Ավադակ եղբայրները», «Բախչիսաբայի շատրվանը», «Գնչուհիներ», Աքսորում սկսեց գրել «Շվեդենի Օնեգին»-ը: Վորոնցովյան լրտեսների անգեկությունների հիման վրա Պուշկինը վերաքսորվում է իր հայրենի Միխայլովսկոյե գյուղը, ուր և ավարտում է «Բորիս Գոգունով»-ը:

1825 թ. գեկեմբերի 14-ին բռնկվեց գեկաբրիստների ապստամբությունը: Նիկոլայ 1-ինը զաժանորին ճնշեց ապստամբությունը և նրա ղեկավարներին հինգին կախեց, իսկ 120-ին աքսորեց: Գլխավորեց ռուս ազնվական առաջավոր երիտասարդությունը, Պուշկինը, որ բազմաթիվ թերեւով կապված էր ղեկարբրիստների հետ, այդ գեպքից ցնցվեց: Կասկածեցին, որ պոետը ղեկարբրիստական կազմակերպության անդամ է: 1826 թվին ցարի կարգադրությամբ Պուշկինը հսկողությամբ պալատ տարվեց: Պետի և ցարի միջև տեղի ունեցավ հետեյալ խոսակցությունը.

«Ի՞նչ կանխիր, եթե ապստամբության օրը լինիր Պետերբուրգում» — հարցրել է Նիկոլայ 1-ինը:

«Կմասնակցի ապստամբությունը» — պատասխանել է Պուշկինը:

«Իսկ այժմ ի՞նչ ես զրույցում» — հարցրել է ցարը:

«Գրեթե ոչինչ, ցենզուրան շատ խիստ է» — պատասխանել է պոետը:

«Իսկ ինչո՞ւ ես այնպիսի բաներ գրում, որ ցենզուրան թույլ չտա» — հարցրել է Նիկոլայը:

«Ցենզուրան շատ ավելի անմեղ բաներ չի թույլ տալիս, քան թե այն, ինչ ես եմ գրում» — պատասխանել է Պուշկինը:

Ցարը պոետի հետ ունեցած խոսակցությունից եղբակացուսւմ է, որ անհրաժեշտ է, որպեսզի ինքն անձամբ զրադվի Պուշկինի գրվածքների ցենզուրայով և նրան հայանում է, որ այսուհետև ինքը կլինի Պուշկինի ցենզորը:

Պալատական ընդունարանում շատերն էին հետաքրքրու-
թյամբ սպասում, թե ինչով կավարտվի ցարի և պոետի առեւեկ-
ցիան: Նիկոլայ 1-ինը, իրեն հատուկ կեղծավորությամբ բռնելով
պոետի ձեռքը, գուրս է գալիս ընդունարան և հանգիստվւր կեր-
պով հայտարարում.

— Ահա ձեզ նոր Պուշկինը, ինչ Պուշկինի մասին մոռացեք:

Նիկոլայ կախողը ձգտում էր դրանով արգելել պոետի ա-
զատամիտ, ուղուցիտն ստանալորենիքը և հնարավորության
գեպքում նրա հանճարը ծառայեցնել իր գործունեությունը դո-
վերգելուն: Ցարը չարաչար սխալվեց իր հաշիվներում: Ինչպես
հայանի է, Պուշկինը 1827 թ. գեկարբիստ Ա. Գ. Մուրավյովի
կնոջ միջոցով Սիրիը է սեղարկում «Աքսորյալ գեկարբիստնե-
րին» իր հայանի ստանալորը: Այդ ոտանալորում նա հայտա-
բարում է, թե գեկարբիստների գործն իզուր է անցնի, կդա-
մի օր, երբ բանտի պատերը կխորտակվեն և նրանք նորից մար-
տի կեննեն: Այստեղից բխում է այն եղբակացությունը, որ
սխալվում էին Պլեխանովը և նրա համախոհները, որոնք գտնում
էին, թե Պուշկինը՝ 1826 թվականից հետո հաշտվել է նիկոլաեյան
ռեժիմի հետ: Նրանց եղբակացությունը ժխտվում է նաև Պուշ-
կինի «Պալատում», «Դուրբովսկի», «Կապիտանի աղջիկը», «Հու-
շարձան» գործերով, որոնք նա գրել է այդ շրջանում:

1829 թվականին Պուշկինը դալիս է Կովկաս, Թբիլիսի, և
ապա Հայաստանի վրայով ռուսական հաղթական զորքի հետ
միասին գնում Կարս, Արզրում, որպիսի ճանապարհորդությունը
նա նկարագրել է իր «Ճանապարհորդություն գեպի Արզրում»
գեղարվեստական ակնարկի մեջ:

1831 թ. Պուշկինն ամուսնացավ Նատալիա Դոնչարովայի հետ, ազնվական մի կին, որը չկարողացավ հասկանալ ու դնահատեղ ամուսնու հանճարեղությունը։ Պուշկինն ընտանիքն էր այցելում ֆրանսիական ռեսպուբլիկականներին՝ փախած, միապետական տոհմից՝ Դանտեսը։ Ֆրանսիական ազնվական այլասերված երիտասարդությունն այդ ներկայացուցիչը, որը դուրկ էր պատվից ու բարոյականությունից, տեսակցություններ էր ունենում Նատալիայի հետ։ Պալատական ոճական այս առիթն օգտագործում է կեղտոտ բամբասանքներ տարածելով Պուշկինի ընտանիքի մասին, ձգտելով արատավորել պոետի պատիվը, Պուշկինի համար ստեղծելով խեղդիչ մթնոլորտ։ 1836 թ. նոյեմբերին պոետը և նրա ընկերներն ստանում են անստորագրի մի նամակ, ուր ստորագրելից ակնարկով խոսվում էր նաև Պուշկինի կնոջ և Նիկոլայ Թադավորի կապերի մասին։ Պոետն այս անպատվությունը չէր կարող տանել, նա այդ բոլորի մեջ մեղավոր է համարում սուրբ Դանտեսին և իսկույն նրան հրավիրում մեհամարտի, որը անդի ունեցավ 1837 թ. փետրվարի 8-ին։ Մեհամարտի ժամանակ Պուշկինը ծանր վիրավորվեց։ Այդ առիթով զործի դրվեցին նկնդ, սպանիչ բժշկական մեթոդներ՝ արագացնելու համար հանճարեղ պոետի մահը։ Պուշկինի վիրավորվելու հաջորդ օրը ցարը վերջին սպանիչ բարոյական հարվածը հասցրեց պոետին, պալատական բժիշկ Արենդի միջոցով նրան ուղարկելով մի դրություն, որտեղ հայտնում էր, թե պոետը կարող է չվհատվել, նրա ընտանիքն իր հովանավորություն տակ կլինի։

1837 թ. փետրվարի 10-ին մարեց այն մարդու կյանքը, որին պրոգրեսիվ մարդկությունը շատ է պարտական։ Այն մարդը, որի հետ էր դեմոկրատական Ռուսիան, թաղվեց առանց հուղարկավորություն։ Յարական կառավարությունը Պուշկինի մարմինը թաղել ավելի ժողովրդից զաղախի։ Հասարակությունը ցատուժով լի էր մեծ հանճարի գահիճների նկատմամբ, ժամանակակիցներից մեկն ասել է. «Եթե Ռուսաստանում հնարավոր լիներ ռեսպուբլիկա, ապա դա կրանկեր Պուշկինի մահվան օրը»։

ԴԱՐԱՇՐՋԱՆՔ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Ա. Ս. Պուշկինն իր գրական գործունեությունը սկսեց 1814 թվին և ընդամենը 23 տարվա ստեղծագործական կյանքից հետո սպանվեց իր հանճարի փթթման մոմենտին:

Ռուսաստանում այդ ժամանակ իշխում էին ցարը, ազնվականները, ճարտարները: Տասնյակ միլիոնավոր ճարտիր օր ու գիշեր, շարավիժա բոլոր օրերին աշխատում էին, կերակրում ողջ Ռուսաստանը, բայց իրենք մնում սոված:

Պուշկինի մտերիմ ընկերներից ղեկարարն էր Ռիլենը գյուղացիությունից լուսնային արտահայտել է հետևյալ խոսքերով. «Մենք ցանում ենք, նրանք հնձում», «մեզանից երկու կաշի են նրանք քերթում», «գու մեզնից մի հարցնի թե ինչպես են ապրում ցարերը, այլ ասա, թե ինչպես պետք է խեղդել նրանց»: Պուշկինն իր դարն անվանել է դաժան դար: Իրոք, գյուղացիությունը շահագործումը, նրա տառապանքներն ու տանջանքներն անսահման էին: Պուշկինի հմայքի առարկան՝ Ալեքսանդր Ռադիշևը, կալվածատերերի տիրապետությունը անվանում էր «վաղրերի իշխանություն»: Նա իր գործերում պատկերում էր գյուղացիներին, որոնք շարավիժա մեջ 6 օրը աշխատում էին կալվածատերերի համար: Ռադիշևն այդ համարում էր ընտելյան և մարդկային օրենքներին հակառակ ու ապստամբություն կոչ էր անում գեռն 18-րդ դարի 90-ական թվականներին: Ռադիշևին ժամանակակից Ֆոնտիպկինը, որին Պուշկինն անվանել է «աղաքացիական բարեկամ», ճորտերին ծեծելը, նրանց աշխատանքի պատգները յուրացնելը, նրանց հետ որպես անասունների վարվելը համարում էր անօրինականություն ու անարդարություն:

Պուշկինը եղել է իր դարի միապետական և ճարտարական կարգերի ամենամեծ, ամենախիզախ մերկացնողներից մեկը՝ զեղարվեստական գրականության մեջ: Բավական է հիշել թեկուզ նրա «Դյուղը» ստանալու օրը, «Նվագի Օնեգին» պոեմը, «Դուբրովսկի», «Կապիտանի ազգիլը» վիպակները:

«Դուբրովսկի» վիպակում Պուշկինը պատկերում է թե ինչպես խռոր կալվածատերերը հեռզենտե կուլ են տալիս մանր կալվածատերերին: Նրանք պահում են հսկայական քանակու-

թյամբ որսորդական շներ: Շներն համար կո հատուկ հիվանդանոց: Եւ սովահար գլխ:դացիների աշխատանքով այնքան լավ են պահում որսորդական շներին, որ նրանց վիճակին կնախանձեին սչ միայն ճորտերը, այլև շատ ազգատաղած ազնվականներ: Վերջապես Պուշկինը ցույց տվեց, որ պետութլյունը, դատարանը կալվածատերերին են ծառայում ընդդեմ գյուղացիութլյան, իսկ գյուղացիութլյունը տարերայնորեն դիմում է սպրտամբուլթյան:

Հայտնի է, որ Պուշկինի ժամանակ գյուղացիական ելույթներն, խռովութլուններն թիվը Ռուսաստանի գանազան հահանդներում օբլստորե ավելանում էր: Ճիշտ է, այդ խռովութլյունները ճնշվում, արյան մեջ խեղդվում էին ցարական դահիճների կողմից, բայց դրանք անհետևանք չէին անցնում:

Ազնվականութլյան որս իրավը վախճալով գյուղացիական ուղղույթային և մտահոգվելով ազնվական անտեսութլյան հետադադարդայմամբ, հանդեց այն համոզման, որ անհրաժեշտ է քաղաքական կյանքի հեղաշրջում: Ազնվականութլյան այս շերտը միավորվեց քաղաքական դանազան դադանի ընկերութլյունեքում, որոնք պատրաստեցին 1825 թվի դեկտեմբերի 14-ի սպրտամբուլթյունը: Լենինը նրանց անվանել է ազնվական ուղղույթոններ: Նրանք արտահայտում էին ժամանակի հակամիապետական և հակաճարտարական առաջադեմ գաղափարներ, սա էր նրանց ուժը: Բայց ազնվական ուղղույթոնները կտրված էին ժողովրդից: Սա էր նրանց թուլութլյունը:

Ա. Ս. Պուշկինը սերտորեն կապված էր գեկարբիստներին հետ, ինքը քաղաքական լիցք էր ստանում գեկարբիստներից և պոետական իր ոտեղծագործութլուններով բարբոքում էր նրանց մեջ սեր գեպի ազատութլյունը և բռնակալութլյան դեմ սայքարելու պատրաստակամութլյուն: Պուշկինը գեկարբիստների ամենամեծ պոետն էր, նրանց պոետական վրոշակակիրը: Կախազան բարձրացված հայտնի հինգ գեկարբիստներից Մ. Պ. Բևուտովե—Ռյուսինը, գեկարբիստական Հորավային կազմակերպութլյան գեկավալաներից մեկը, թաղամբրին սպանելու կոչ անելով, սրտասանել է Պուշկինի «Դաշուն» ոտանավորը, նպաստելով դրա հետադա տարածմանը: Պուշկինը նամակագրութլյամբ կապված էր գեկարբիստական Հյուսիսային կազմակերպութլյան գեկավալար Ռիլեկի հետ: Նա հիացմունքի չլուսք է ասել Հորավային կաղ-

մտկերպության զեկաւար Պետեկի մասին, համարելով նրան
ամենախելոք մարդկանցից մէկը և ուսուցիտն զլիւի տեր:
Պուշկինի լավագոյն ընկերներից էին ակտիւ ղեկարրիստներ
Լ. Պուշկինը, Կոստիւրեկերը: Նա ճանաչում էր Ս. Վուկանսկուն,
Միխայիլ Օռլովին, Նիկիտա Մուրավյովին, Յակուշկինին, Յա-
կուբովիչին, Ռաչկոսկուն և ուրիշ շատ ղեկարրիստներ:

Դեկարրիստները Պուշկինին խնայելով չէին ընդգրկել իրենց
կազմակերպության մէջ, մտածելով, որ նա կազմակերպության
համար ավելի օգտակար կլինի դառնալով զադամնի կազմակեր-
պություններից զսուս: Ներկա լինելով ղեկարրիստական մի
գտադանի հովաքոյթում, Պուշկինն ասել է. — «Գադանի բնկե-
րության կամ կո, կամ ույստեղ էլ ստանալու է իր սկզբնաւոր-
ությանը և որ ինքը կգառնա զադամնի կազմակերպության
անդամ: Բայց ղեկարրիստները կատակի բնույթ են տվել հա-
վարայի: Պուշկինը բացականչել է. «Ես երբեք այնքան զժրախոտ
չեմ եղել, ինչպես այժմ»:

Պուշկինի ժամանակաշրջանի հասարակական կյանքը Ռու-
սաստանում և Նիքրոսլաւում հագեցված էր սլատական այնպիսի
ղեկաբերով, ինչպես ֆրանսիական բուրժուական-ուսուցիան,
1812—14 թ. թ. ուսուցիտի հայրենական պատերազմը Նա-
պոլեոնի դեմ, և 1830 թ. ուսուցիտն դեպքերը Նիքրոսլաւում,
որոնք ղեկարրիստական շարժման հետ միասին անջնջելի հետք
են թողել 19-րդ դարի ամբողջ հասարակական կյանքի վրա:

Այս ոտքիաւ-քաղաքական իրադրության մէջ ընական է,
որ գոտակարգների և նրանց սլարտիաների, խմբավորումների
սլայքարը սկսեք է ծաւալել զարաշրջանի ամենահիմնական
պրոբլեմների շուրջը—այն է՝ ուսուցիտի կողմ կամ դեմ, ղու-
ղայիսության աղատադրության, ճորտատիրության վերացման
կողմ կամ դեմ, քաղաքական ռեֆորմների կողմ կամ դեմ:

Անդակաւության ամենապրոգրեսիւ վասը կանգնեց աղբու-
տամբության, պրոգրեսի, քաղաքական լուրջ ռեֆորմի կամ հե-
ղաշրջման կողմը: Ռեակցիոն դասը մտաց ղրաւնց կատաղի թշնա-
մի: Պուշկինը դառնում էր աղատության ու պրոգրեսի կողմա-
կիցների բաւակում և ծաւալեց ամենատկտիւ ղաղաւարական
սլայքար ռեակցիոյի, միապետության և ճորտատիրության դեմ:
Ծիշտ է, նա սլղ սլայքարի ընթացքում ղրսեորել է որսը անհե-

տեղեկանութիւն, հակառութիւն, լայն աչք հակառութիւնները ռեալ կերպով արտացոլում էին իրական կյանքի հակառութիւնը:

Պուշկինը պայքարի մեջ մտավ միապետութեան և ճշմարտութեան հակաժողովրդական ուժերի դեմ և այդ անհաղթաբար կռիւում ընկավ սրպես աննկուն զինվոր: Նա դարաշրջանի ամենամեծ մարդն էր, ոչ միայն Ռուսաստանում, այլև Նիքոպոլում: Նա մեծադուքն հայրենասեր էր, ժողովրդի պաշտպան, հակափողովրդական ուժերի երգվալ թշնամի:

Դեռևս իր վաղ երիտասարդութեան օրերին պոետն արտահայտել է իր քաղաքական համոզմունքը: Նա ասել է. «Ես չեմ ծնվել ցարերին զվարճացնելու համար»: Նա ձգտել է զստնալ ռուս ժողովրդի արձագանքը: Այգլիսին էլ նա դարձավ և զրա մեջ է Պուշկինի հանճարի մեծութիւնը:

Պուշկինը մեծ է նախ դարաշրջանի տաղանդ, ուսուցչին-դեմոկրատական իդեաների արտահայտմամբ, ժամանակակից կյանքի ամենալայն ընդգրկումով, կյանքի զեղարվեստական արտացոլման վարպետութեամբ: Որքան հեղինակը ավելի խորը և բազմակողմանի է արտահայտում իր ժամանակի տաղանդ, դադարաւորները, այնքան ավելի է բարձրանում նրա ստեղծագործութեան սոցիալական նշանակութիւնը: Որքան մեծ ընդգրկումով և ունալ է պոետն արտահայտում ժողովուրդների կյանքն ու կենցաղը, այնքան բարձրացնում է նա իր ստեղծագործութեան նշանակութեան արժեքը:

Պուշկինը նոր էտապ է ռուս գրականութեան պատմութեան մեջ նրանով, որ նա իդեալական հարստացրեց այն, հասցրեց դարի ամենաառաջավոր գրականութեան տոտիճանին: Իր արտահայտած գաղափարներով նա վիթխարի դեր կատարեց հասարակութեան ինքնագիտակցութեան զարգացման գործում, մորիլիզացնելով այն. ընդդէմ միապետութեան, ֆեոդալիզմի: Պուշկինն իր մեջ կենդանացրել ու նոր սթաիկ արտացոլել է ժողովրդական մասսաների ցատումը բոնութեան, ստրկութեան դեմ և նրանց երազանքը սպաս, ինքնուրույն, երջանիկ կյանքի մասին:

Ժողովրդի սնահառութեան հիմնական պատճառը պոետը համարել է միապետութիւնը և ճշմարտութեան կարգերը ու կոչարի կատաղի պայքար մղելու նրանց դեմ:

Ո՛վ չի հիշում Սա. Շահումյանի խնդրանքով Հովհաննես Թումանյանի թարգմանած քառատողը Պուշկինի հայտնի «Աղա-տուխուն» ստանավորից.

Ասում եմ քեզ և քո դահլը,
Միահեծան դռնոց ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:

Պուշկինը ճարտասիրությանը համարում էր Ռուսաստանի պրոգրեսն արգելափող ուժ և այն միտքն է արտահայտել, որ Ռուսաստանի արագ զարգացումը պայմանավորված կլինի ճորտատիրական կարգի վերացմամբ: Դեռևս 1819 թվականին գրած «Դյուդը» ոտանավորի մեջ նա պատկերում էր ժողովրդի ծանր վիճակը, երազում նրա ազատության և երջանկաբեր արշավույսի մասին:

Պոետը կողմնակից էր ցարիզմի և ճորտատիրության բռնի ուժով խորտակելուն: Այս դադափաբը նա արտահայտել է «Դաշունչն», «Աքսորյալ դեկարբիստներին» և այլ ստանավորներում, ուր նա հանդուժ է ակնկալում կոչ անելու անհրաժեշտությանը: Անվեր-նադիր մի ստանավորում նա գրել է — «Ո՛վ է ակիքներ ձեզ կանգ-նեցրել, «Ո՛վ է չղթայել ձեր հզոր վաղքը, «Ո՛վ է ձեր խռովարար հոսանքը լուռ ննջող լճակի վերածել. դուք հողմեր, փոթորիկ-ներ, պայթեցրեք ալիքները, խորտակեցեք կործանարար սլա-տները, ուր ես դու, ամպրոպ-սիմվոլ ազատության, սլացիր կաշ-կանդված ջրերի վրայով:

Աքսորի շրջանում, այն մոմենտին, երբ Պուշկինն իրեն ազատ է գլոցել լրտեսող աչքերից, համարձակվորեն ասել է, որ «Դուռստաստում մի դասակարգ կա, որ արժանի է հարգանքի. դա հողադուրժն է»: Նա ասել է, որ ինքը ուրախությամբ կքա-շեր աղնվականների կախողանի պարանը: Այստեղից էլ բխում է տոեաի անհուն առեկտութունն ու սարկաղմը ցարի սըբանյակ-նիւր Արաիչեի, Վալոնցովի, Դուլիցինի և շատ ուրիշների նկատ-մամբ: Այն ինչ պոետը ասել է վաղ երիտասարդության շրջա-նում, նրա համար դարձել է քաղաքական համոզմունք.

«Երկրի տիրաններ, սարսևք, դողացեք,
Խոկ դուք ինձ լսեք և արիացեք,
Ու ոտքի ելեք, ընկած ստրուկներ...»:

Պուշկինի սյուդիան, նրա սանդագադորությունը հաղեցված է քաղաքական մոտիվներով: Այս առումով անհնար է համաձայնվել Ա. Վ. Լուճաչարսկու հետ, որը զրել է. «Փաղաքականությունը չի եղել Պուշկինի սեփականության կենտրոնը» (А. Луначарский—«Классики русской литературы». Госиздат. 1937 г. стр. 130):

Սխալվում է և Ա. Յա. Կիրպոտինը, երբ Պուշկինի կողմից ճորտատիրական, միապետական կարգի խիստ քննադատությունը չի համարում այն որակի քննադատություն, որի հիման վրա Պուշկինին համարելինք այդ կարգերի թշնամի: Ա. Յա. Կիրպոտինը գրում է, որ իրը թե Պուշկինը «միապետությունը համարում էր հաստատուն և որոշ առումներով անդամ օգտակար ուժ»¹ Իհարկե, ոչ մի հիմք չկա նման հայտարարության համար:

Պուշկինը մեծ համակրանքով էր լցված ոչ միայն սուս, այլև բոլոր ժողովուրդների նկատմամբ:

Պետքը գովերգել է հույն ժողովրդի ազատագրական սլավոն քարն ընդգեմ սուլթանիզմի և կոչ արել ապստամբել բռնություն դեմ: Նա համակրանքով է նկարագրել նաև կովկասյան ժողովուրդների ատելությունը ցարական բռնության դեմ: Վերջապես Պուշկինը գովերգել է լեհ ազատաշունչ, սևուցիտներ բանաստեղծ Ադամ Միցկևիչին, և առանձնապես այն, որ լեհ բանաստեղծը հաճախ թուսում էր ապագա ժամանակների մոտին: Երբ «Ժողովուրդները կմոռանան փոխադարձ թշնամանքը և միմեծ ընտանիքի մեջ կմիավորվեն»:

Լինելով իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը, Պուշկինը հանդես էր գալիս, Հայտնի է, որ հավիճարել է Քրիստոսին առաված համարելու լեզունը, արթնել է ներշնչել իր եղբորը. «Փավրիսիադա» պոեմը, ինչպես հաջորդությամբ ապացույց է ընկ. եմ. Յարոսլավսկին՝ իր «Պուշկինի արթնելը» բրոշյուրում, պոետի արթնելու հայացքների արտահայտում:

¹ В. Я. Кирпотин—Наследие Пушкина и Коммунизм. изд. 1936 г стр. 134.

թյունն է: Պուշկինը իր էպիգրամները և այլ ստեղծագործություններն մեջ միշտ կատաղի պայքար է մղել հողևորակաճանության, կրոնական խավարամոլության և նրանց ամեն տեսակ ներկայացուցիչների դեմ: Հսգու ամբողջ էությունը նա բացառկան է:

Կեյցե՛ն մուսաններ:

Կեյցե՛ արևը

Թող կորչի խավարը:

Պուշկինը ուսու դրականությունը խոշոր չափով առաջ մղեց գաղափարական բուրժուականության տեսակետից: Նա իր պոետական գործին նայում էր սրպես հասարակական վիթխարի նշանակություն ունեցող գործի և ուսու դրականության մեջ նա այս ուղղությամբ նույնպես հիանալի տրադիցիա ստեղծեց, որը շարունակեցին նրա մեծ ժամանակակիցներ Լեոմոնտովը, Գոգոլը, Բելինսկին և հաջորդ սերնդի արվեստագետներ Նեկրասովը, Զերնիշևսկին, Սալտիկով-Շչեդրինը, Լև Տոլստոյը: Պուշկինի ստեղծագործության ամենագնահատելի կողմը նրա հայրենասիրությունն է: Նա իրեն զգացել է Ռուսաստանի զավակը, հայրենիքի սրբին և իր պոետիայով հավատարմությամբ ծառայել հայրենիքին, ժողովրդին: Պուշկինը լի էր անհուն ասելության մարդկային հայրենիքի՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիները, Հանուն հայրենիքի սիրո, նրա պաշտպանության սրբազան պարտականության, Պուշկինը գիտակցել է տալիս մարդկաների («Պոշտովա»), ասրեպոֆների («Բորիս Գոդունով») քաղաքական զավաճանության ահալորությանը և դավաբանությանը, որոնք պատրաստ են Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքական միասնության համար զոհելու ամենաթանկագին բանը՝ կյանքը: Պուշկինը դրական գծերով է պատկերել նրանց, ովքեր Ռուսաստանի պետական, ուղղափառ հոգևորական և օտար թշնամիներին ջախջախելու համար մեծ ծառայություն են մատուցել (Պետրոս 1-ին): Պուշկինի պոետիայի նշանակալի մասը հենց նվիրված է ուսու մարդկանց ներշնչելու, նրանց պիտակցել տալու հայրենիքի հոգրության մասին, թշնամու հարձակման դեպքում միասնական լինելու, և մեկ մարդու պես երկիրը պաշտպանելու համար:

Պուշկինն իր հայրենիքի թշնամիներին հիշեցնում էր, թե այրվող Մոսկվայի փլատակների վրա անգամ մենք չճանաչեցինք լպիրը կամքը նրա, որի կրունկի տակ դուք զոհում էիք։ Պոետը մեծ պաթոսով գովերգում է Բորոգինսոյի հերոսներին, որոնք կործանիչ հարվածներ հասցրին Նապոլեոնի զորքերին։

Պուշկինի պոեզիան լի է ուսու մարդու ամենանուրբ սիրով գեղի հայրենիքի սիրաբլ՝ մայրաքաղաք Մոսկվան։

Հիշենք Վելդենի Օնեգինս-ի հետևյալ խոսքերը. «Մոսկվա... Ինչքան ձայնն այս վսեմ, մոտ է մեր ուսու մարդու սրտին»։

Ձուր Նապոլեոնն այստեղ սպասեց՝
Վերջին բախտով իր այն արած,
Որ իր մոտ դա Մոսկվան չսքած,
Բանալիները կրեմլի բերի։
Ոչ, չգարձավ Մոսկվան զերի
Ձխոնարհեց զլուխ նրան։

Մի կողմից ջերմ որդիական սեր գեղի իր հայրենիքը— Ռուսաստանը, մյուս կողմից նույնքան խորը և անզուսպ ստեղծելուն ցարի, ճորտաախրության, հայրենիքի ազատությունը խեղդող ամեն անսակ մութ ուժերի դեմ, ահա Պուշկինի ստեղծագործությունների հիմնական եղանակը։

ՍՏԵՂԾԱՆՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴԴՐԿՈՒՄԸ

Պուշկինը ուսու ազգային մեծագույն բանաստեղծն է։ Նրա ստեղծագործությունները զարձեղ են ուսու ժողովրդի անցյալ կյանքի մի ամբողջ ժամանակաշրջանի գեղարվեստական հանրազրտարանը։ Ռուսական պատմական կյանքի բոլոր հանդուցային էտապներն արտացոլված են նրա ստեղծագործությունների մեջ։ Վերջ իմաստուն Օլեզի մասին» բանաստեղծությունից մեջ արտացոլված է ուսական կյանքի 10-րդ դարը, «Բորիս Դոդուհով» դրամայում՝ 16-րդ դարի վերջը և 17-րդ դարի սկիզբը, «Ներք Ստեփան Ռազինի մասին» բանաստեղծությունների մեջ՝ 17-րդ դարի յոթնասունական թվականները, «Պետրոս մեծի ինչուքը», «Պոլտավա», «Պրինցյա հեծյալը», «Պետրոս մեծի Արապը» երկերում պատկերված է 17-րդ դարի վերջը և 18-րդ դարի

սկիզբը: «Պուգաչովի լուսնախ պատմությունը» զրքում, «Կապի-
տանի աղջիկը» վիպակում պատկերված է 18-րդ դարի երկրորդ
կեսը, առանձնապես 70-ական թվականները, «Պղնձյա հեծյալը»
պոեմում, «Ճանապարհորդություն դեպի Արգրում» ակնարկում ար-
տացրված է 19-րդ դարի 20-ական թվականները:

Հարյուրամյոր բանաստեղծությունների, սլոգանների, պատմ-
վածքների մեջ Պուշկինը պատկերել է իր ժամանակակից կյան-
քը: Որոշ բանաստեղծությունների և պոեմների մեջ Պուշկինը
վերած է անում նայել Ռուսաստանի ապագային:

«Եվգենի Օնեգին»-ի մեջ նա ապագա Ռուսաստանը պատկե-
րում է որպես տեխնիկական զարգացած մի երկիր, ուր ճանա-
պարհները կհասվեն օդային-աչյանակ, ջրերի վրա թռի կա-
մուրջներ կլինեն, «Լեռներ կշարժենք տեղից, ջրի տակից կանց-
կացնենք հանդուգն կամարներ (թունեղներ)»:

Պուշկինի ստեղծագործական ընդգրկումը չի բահմանափակ-
վում միայն ռուսական կյանքի արտացոլմամբ: Նրա հանճարն
ընդգրկել է իր ժամանակակից շատ ժողովուրդների կյանքը:
Ռուս ազգային բանաստեղծի համար թանկ էր ինչպես իր ժո-
ղովրդի, այնպես էլ այլ ժողովուրդների ազատագրումը բռնա-
պետությունից: Ժողովուրդների կյանքի գեղարվեստական ար-
տացումամբ, աշխարհի ոչ մի դրող (ոչ Շեքսպիրը, ոչ էլ Գյոթեն)
չի կարող համեմատվել Պուշկինի հետ: Եվ այս բոլորի մեջ կարե-
վորն այն է, որ նա գնահատում է ժողովուրդների կյանքում
այն, ինչը բարձր է, ազատ, լուսավոր, պրոգրեսիվ: Եթե Պուշ-
կինը պատկերել է ժամանակակից հույներին, ապա նա արտահայ-
տել է հույների ազատագրական դադափարը սուլթանական
բռնապետությունից: Նա կոչ է անում. «Ապստամբիր Հունաս-
տան, ապստամբիր: Եթե նա պատկերում է կովկասցիների կյան-
քը, ապա նա իր համակրանքն է արտահայտում դեպի նրանց
ազատագրական ձգտումները: Եթե նա պատկերում է գնչուներ-
ին, ապա այդ ժողովրդին պատկերում է ոչ թե որպես զուղ կամ
զուլալ, ինչպես գնչուներին փառվելում էին եվրոպական զրա-
կանություն մեջ, այլ այնպիսի մաքրկանց, որոնք չեն ենթարկ-
վում բռնապետական սխտեմներին: Պուշկինը պատկերելով
հրեաներին, ուշադրություն է դարձնում հրեական խրճիթի
բնակիչների թշվառ կյանքի վրա, եթե նա սերբերին է պատ-



կերում, ապա վերցնում է «Զորավոր Միլիտին», որը բողոքում է ենդերինների դեմ, որոնք կարում են սերքերի գլուխները, առեւանգում են նրանց կանանց, իսկ երեխաներին գերի տանում:

Վալերի Բրյուսովը գտնում է, որ Պուշկինի ստեղծագործությունների վրա կարելի է դրել ժամանակակից ժողովուրդների պատմությունը:

Այդ մասին են վկայում, բայցի վերը նշածից, նաև այնպիսի երկեր, ինչպես «Անժեկոն», «Վլախը Վենետիկում», «Խառնականի նմանությունը», «Խիստ Դանթեն չի շարժարձակ ստեղծում», «Խաղահավան սոմանա», «Հարազատ Խաղահավան վրա», «Շատանգական երկրում», «Ջայրանում է Սուլթանը», «Չինականի նմանությունը» և այլ ժողովուրդների կյանքն առաջացող երկեր:

Հանձարեղ պոետի ստեղծագործությունն իրենից ներկայացնում է ժամանակակից ողջ պատմությունը և կյանքը միևյան տուր ձևով:

Բայց բնորոշն այն է, որ նա ամեն մի ժողովրդի մասին խոսելիս գովերգել է ժողովրդի առաջավոր ուժերը և քննադատել ուսուցիչին, հակաժողովրդական ուժերը: Սրա մեջ է նրա ստեղծագործության թե՛ պատմական, թե՛ արդիական նշանակությունը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Պուշկինի մեծությունը ոչ միայն առաջավոր իդեալներ արտահայտելու, կյանքի ամենալայն արտացոլման մեջ է, այլև նրա ստեղծագործությունների կատարյալ գեղարվեստականության մեջ: Պուշկինի համար գեղարվեստական գրականությունը պարզապես լատի խաղալիք չէր, ինքնուրույն աշխատանք չէր, այլ հասարակական լուրջ զործունեություն: Պուշկինը չափազանց սլարդ էր ըմբռնում գեղարվեստական գրականության բացառիկ գերը սրտ միասնական և ճարտարապետական կարգերի դաժան պայմաններում: Նա վերջ տվեց գրականության նկատմամբ ցուցարարած արհամարհանական վերաբերմունքին: Նա ինքը զարձակ պրոֆեսիոնալ պոետ, գրանով իսկ ջախջախիչ հարված հասցնելով նրանց, որոնք պոետական առաջարկը համարում էին ինչ որ սոսոր, աղնվախանին անվայել գործունեություն: Պուշկինը զարձակ գրական մեծագույն մարտիկներին մեկը:

Դեռ պատանեկության տարիներին զբաժն առնալուց ընկերացու և «Բոլա» ոտնավորներում պետքը նշում է իր պոետական գործունեության ծրագիրը: Այստեղ նա այն միտքն է արտահայտել, որ եթե պետքը չունի ստեղծագործելու իսկական շնորհ, չպետք է ավելորդ տեղ զբաղեցնի, առանց այն էլ, չափողանց շատ անապահով գրողների շարքում: Ամեն մարդ, որ ստանալու է թիում, նա պետք չի: Պաշկինը նշում է, որ պոետի ուղին զգալի է, տանջալի և զոհողություններով լի: Պաշկինը գտնում էր, որ պետք չպետք է ընդգործակի ուրիշներին, նա պիտի ինքնուրույն լինի, լինի իր ժողովրդի, իր երկրի հարապատ արձագանքը, պետական արտահայտիչը:

Պետքը դեռ պատանեկական տարիներին նշել է ստեղծագործության հիմնական չափերունքներից մեկը— լինել հասկանալի ամենքին: Նա չի ուզում համարվել անհասկանալի լեզվով գրող գերմանացի Կյոպլտոկին: Պետքն առում է, «ես ցանկանում եմ, որ ամենքը ինձ հասկանան, ամենքը՝ մեծից մինչև փոքրը»:

Պաշկինն ստեղծեց ռուս ազգային բարձրարժեք, գեղարվեստական գրականություն: Այն ժամանակ, երբ ռուս ազնվական գրողների սրտը խավերում ձգտում էին լինել ռուսական Ռասսին, Կոսեկ, Բուալո, նույն ժամանակ Պաշկինն իր ստեղծագործական հանձնարով ոչնչացրեց 18-րդ դարի ռուս ինտելիգենցիայի սրտը խավերի մեջ առկա ստորաքարշությունը գեպի Եվրոպան, ստեղծեց ռուսական ազգային, ինքնուրույն բարձր գրականություն:

Պաշկինն ստեղծեց այնպիսի երկեր, սրտից մեջ, ինչպես Բելինսկին է բնութագրել, «սուսական բույրն է զգացվում»: Նրա հարյուրավոր ոտնավորները պոետիայի գոհարներ են: Նրա «Պոետական», «Պրոզայական», «Գրական» պոեմները, «Եվգենի Օնեգին» չափածո վեպը, «Բորիս Գոդունով» դրաման, «Կոպիտանի աղջիկը» վիպակը համաշխարհային գրականության սույն ֆանդի մեջ են մտել և կմնան ընդմիշտ:

Պաշկինը գրեց սեպիւղմին, ապահովեց (Դոբրին հա միտսին) սեպիւղմին հաղթանակը ռուս գրականության մեջ, այն սեպիւղմին, որը ամենահզոր հոսանքն է համաշխարհային գրականության մեջ, սեպիւղմին Պաշկինի ձեռքին պաշարի ամենա-

ուժեղ զենքերից մեկն էր ընդդեմ ֆեոդալական իրականության, հանուն հասարակական ինքնադիտակցության բարձրացման:

Իր ստեղծագործության ընթացքում Պուշկինը զրահորեց մեծ արվեստագետին հատուկ բազմապիստեթյուն: Պուշկինը ուսուսեց իր ստեղծագործության, պոեմի, շրամատուրգիայի, արձակի, զեղարվեստական հեքիաթի ամուր չիմքը զրեց: Նա հանգես եկավ ոչ միայն սրայիս պոետ, այլև պատմաբան, շրտպարահախոս, քննադատ: Պուշկինը զրական այդ բոլոր ճյուղերը հասցրեց բարձր դարգացման:

Բազմաժանր էին նաև Սևմարոկովը, Խերասկովը, Տրեյգովովները, բայց Պուշկինն անհամեմատ բարձր սրակ ստեղծեց: Պուշկինի համար ժանրերը հանդիսանում էին կյանքի բազմապիստեթյունը կատարյալ զեղարվեստականության բարձրագույն միջոց: Պոետի մեծությունն այս զեղքում այն է, որ նա կարողանա դանել կյանքի տրտապումն ամենանպատակահարմար ժանրով:

Պուշկինը զարմացում է իր ոտանավորների, պոեմների և արձակ երկերի ու հեքիաթների երաժշտականությամբ: Աշխարհում երաժշտական միտքը ոչ մի պոետի այնքան պարտական չի, ինչքան Ալ. Սերգևիչի Պուշկինին: Պոետներից ոչ ոք համաշխարհային երաժշտական մարին այնքան նյութ չի տվել, որքան ռուսական հանճարեղ պոետը: Ո՛չ Դանթեն, ոչ Շեքսպիրը, ոչ Դյոնիս, ոչ Հյուգոն այս տեսակետից չեն կարող համեմատվել Պուշկինի հետ: Պուշկինի պոեզիան մեծ էտապ է ոչ միայն զրականության, այլև երաժշտության պատմության մեջ: Հայտնի է, որ նրա 550 ստանավորներից 200-ից ավելին երաժշտության է վերածված, իսկ նրա մի քանի ոտանավորները երաժշտականացվել են մի քանի տասնյակ անգամ: Օրինակ «Նս սիրեցի ձեզ» ոտանավորը օգտագործվել է ավելի քան 30 կոմպոզիտորների կողմից, «Դիշերային զեպիսուս», «Դու և Դուք» ավելի քան 20 կոմպոզիտորների կողմից:

Դլինկայի, Չալկովսկու, Ռիմսկի—Կորսակովի, Ռախմանինովի, Ռուբինշտեյնի, Դաբլովսկու, Բորոգինի, Նապրասնիկի, Եզար Յյուի, Մինկուսի, Վերսակովսկու, Վլարդիյի նման հայտնի կոմպոզիտորներ են աշխատել Պուշկինի երկերի երաժշտականացման մեծ և ազնիվ գործի վրա:

Վաղերի Բրյուսովը, որը շատ մեծ ճաշակի տեր մարդ էր, Գորկու բնութագրմամբ ամենազարգացած գրողը Ռուսաստանում, շատ ճիշտ է ասել, որ «համաշխարհային գրականության մեջ ես միայն երկու պոետ գիտեմ, սրանց ստանալուները մինչ այդ աստիճանի իրենց երաժշտականությամբ օրինապատիվ լինեն — գրանք են Վերգիլիոսը և Պուշկինը, Ո՛չ Դյոթլեն, ոչ Հյուգոն և ոչ էլ Դանթեն չեն կարող համեմատվել սրանց հետ»:

Բովական է հիշել Թեկուզ «Ձմռան երեկոն» և «Ձմեռային ձանաղարհը» գլուխիչ, օրինակելի բանաստեղծությունները:

Պուշկինի առաջընթացը Կարամզինից հետո նրանումն էր արտահայտվում, որ պոետը դիմեց ոչ թե ազնվական հասարակության, այլ ժողովրդի լեզվին և հատկապես ժողովրդի լեզուն համաբեց գրական լեզվի զարգացման ամենախոշոր աղբյուրը: Պուշկինը գրել է. «հասարակ ժողովրդի, որը, փառք ասածո, ինչպես մենք, չի կարգում օտարերկրյա գրքեր, չի աղավաղում իր պաղտվածները ֆրանսերեն լեզվով, ահա նրա խոսակցական լեզուն արժանի է ամենախորը հետազոտության»: Պուշկինն այն միտքն է արտահայտել, թե «արձակում ամենահիմնական արժանիքը ճշգրտությունն ու հակիրճությունն է, արձակից պահանջվում է իդեաներ»: Պուշկինի կարծիքով լավ արձակագիրն առաջինը է լինել, ով մտածում է մալրենի լեզվով: Պուշկինի լեզուն ունի սահունություն, պատկերավորություն, երաժշտականություն: Պարզությունը Պուշկինի լեզվական հուշտուրայի ամենազարական կողմերից մեկն է: Դա խորը զարգացման տեղ մարդու, հոնճաբեղ վարդերի լեզվի պարզությունն է: Իսկ դա արդյունք է ոչ միայն ընդունակության, այլև այն բացառիկ հարստե մշխատանքիության, որը այնքան բնորոշ էր բանաստեղծի համար:

Պուշկինը հակադրվում էր 18-րդ դարի և 19-րդ դարի առաջին քառորդի այն ազնվական գրողներին, որոնք գրականությունը ժողովրդից հեռու պահելու համար ջանում էին արտահայտվել՝ բարդ, անհասկանալի լեզվով: Պուշկինը միաժամանակ ցույց տվեց, որ պարզ, հասկանալի գրելու համար շատ ավելի մեծ տաղանդ է անհրաժեշտ: Նրա լեզուն հանդիսացավ իշխող գրական լեզու:

Պուշկինի ստեղծագործության բնորոշ կողմերից մեկը՝ նրա

պոետիկայի վարակիչ ուժն է: Նա իր պոետական մտքի բոլոր միջոցներով ազդում է ժամանակակիցների վրա, աշխատելով ատելի զարձնել ֆեոդալական արքայատոհմայինը: Նա ատելությամբ յուր է ստեղծում գեպի հինը, նեխվածը, իր զարն ապրածը, և միաժամանակ սեր առաջացնում գեպի իր հայրենիքի աջ ամենը, ինչ առաջավոր է, զարգացող, օգտակար: Նա արտացոլելով սեռ կյանքը, ոչ միայն ընթերցողի մեջ է առաջացնում դրական վերաբերմունք գեպի զրական հերոսները, և բացասական վերաբերմունք գեպի վատերը, այլև հաճախ ինքը սցենարվում է իր ստեղծած հերոսներով, ինքն էլ ընթերցողի հետ սիրում է կամ ատում նրանց:

Որպես ճշմարիտ պոետ, Պուշկինը, կյանքի արտացոլումը առկա, առաջնորդվում է գեպքերի, հերոսների փոխադրվածությամբ, նրանց կոնֆլիկտները սեռ նկարագրելու սկզբունքով, նրանց հոգեկան հակասական ապրումների ընթացքի աչքով: Նկարագրությամբ, որ մերթ ընդ մերթ նաև ինքն է զարմանում գեպքերի լուծմամբ: Ասում են «Եվգենի Օնեգին» երկն սովորելիս Պուշկինը դարձացած պատմել է. «Երևակայեցեք, ճատյանան ամուսնացավ գեներալի հետ»: Կարծեք թե ինքը չէ եղել զրա հեղինակը: Միայնով մեծ արվեստագետը հակադրվում է ուսանողիներին, արկածային վեպի հեղինակներին, սրանք տարածված էին Պուշկինի ժամանակի Ռուսաստանում և Եվրոպայում: Պուշկինը հետևում էր կյանքի օրինաչափ զարգացման օրենքներին, որոնում երևույթների պատճառական կապը և տեսնում, թե ուր է հասցնում տվյալ էություն մեջ ընկած անձնավորությունը, տվյալ պայմաններում ծագած հասարակական երևույթը:

Պուշկինի ստեղծագործությունների համար բնորոշ է նրա երկերի գաղափարական խորությունը: Ինչպես մեծ պոետ, Պուշկինը հիշեցնում է մեծ գիտնականի: Ինչքան շատ է ընթերցողը կարդում նրա նույն գեղարվեստական կամ գիտական երկը, այնքան ավելի նորանոր գեղեցիկություններ է հայտարարում: Ավելին, ամեն մի նոր սերունդ իր հերթին ուսումնասիրելով նրա երկերը, հանդիպում է գաղափարական աչքով տեսնողների, սրանք նկատված: Հեն եղել նախորդ սերունդների կողմից: Ընթերցողն այս համոզմանն է հանգում, երբ ուսումնաս-

սիրում է Պուշկինի «Եվգենի Օնեգինը», «Պլինիոս հեծյալը», «Պոլատավան», «Գնչուհիները», «Բոբիս Գաղունով»-ը, «Կապիտանի աղջիկը»:

Իսկ այսպիսի կատարելություն Պուշկինը հասավ իր պոեմների, դրամաների, վեպերի ստեղծագործությունների բարձր մշակվածությունում, հանճարեղ հեղինակը շատ լավ էր տեսնում, թե որն է այն զագավոր, որին պետք է հասնել կոնկրետ զագավորը մաքսիմալ զեղարկատական մշակվածությամբ արտահայտելու համար: Պուշկինն այդպիսի կատարելություն հասնում էր սենսիվալ երկու թանկագին հատկություն—բնական տաղանդ և աշխատասիրություն: Ահհնար է ժողովրդին մեծարժեք մնայուն երկ տալ առանց համառ աշխատանք թափելու դրա կերաման վրա: Ստեղծագործական աշխատասիրությունը բոլոր խոշոր գիտնականների և գրողների լավագույն դժերից մեկն է եղել: Դուրաշըջանային երկ կերտելու համար արվեստագետները, տալիներ, երբեմն տասնյակ տարիներ լսոված աշխատանք են թափել: Պուշկինը «Եվգենի Օնեգին»-ի վրա ութ տարուց ավելի է աշխատել, «Ռուսական»-ի 30 վարիանտ է թողել, այսպես կոչված Բուդինյան աշխատանքն ընթացքում պոետն ավելի շատ դարձել է տվել, քան շատ ուրիշ բանաստեղծներ իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Գեղարվեստական այն կատարելությունը, որ այնքան հմայիչ կերպով երևում է նրա ստեղծագործությունների մեծագույն մասի մեջ, նրա երկերը դարձրել է օրինակելի, էսթետիկայի օրակա:

Բելինսկին, արվեստի մասին իր փիլիսոփայություն (էսթետիկայի) մեջ հենվում է Պուշկինի ստեղծագործությունների վրա, օրենքներ հանելով պոեզիայի, արձակի, դրամատուրգիայի ընդհանուր խնդիրների մասին:

Այսպիսով, Պուշկինի մեծություն հիմնական չափանիշն այն է, որ նա դարձավ իր ժամանակի հասարակական ամենաառաջավոր խավերի տրամադրությունների արտահայտիչը, ամենաառաջավոր մտածողներից, ամենազարգացած մարդկանցից մեկը: Իր ստեղծագործություններն մեջ նա ժամանակակից գրեթե բոլոր ժողովուրդների կյանքն արտացոլեց համակրանքով դեպի ժողովուրդը, և առելություն դեպի քաղաքացի շահագործողները:

կալվածատերերը, աղնվականները և նրանց գործակալները: Վերջապես Պաշկինն այդ բոլորն արտաքսեց ու արտահայտեց դեզարվեստական խոսքի հանձարին հատուկ վարպետությամբ:

Պ Ո Ն Մ Ն Ե Ր Ո՛Ւ

Պաշկինը զարձալ ուսն դեզարվեստական պոեմի հիմնադիրը: Ճիշտ է, նրանից առաջ ուսն հատարակությանը ծանոթ էր Բողգանովիչի «Դուշենկան», Կարամզևների «Իլյա Մուրոմեցը», սակայն ուսն դեզարվեստական պոեմի պատմությունն սկսվում է «Ռուխան և Լյուդմիլա»-յից: Պաշկինի ժամանակ ոչ մի դեզարվեստական դուրձ այնքան մեծ ազդեցիկ չի հանել, ինչպես պոետի այս առաջին պոեմը: Հիացած էին առաջավոր ուժերը: Կատաղել էր ռեակցիան: Ռեակցիոն քննադատությունը խիստ ժխտողական վերաբերմունք ցույց տվեց դեպի այս պոեմը, բողոքելով նրա ժողովրդայնության, մտքերի թաքմության դեմ: Մ. Կաչենովսկին արտահայտելով ռեակցիոն աղնվականության տրամադրությունը, հայտարարեց, որ այս դուրձն իր լեզվով պրոդայիկ է, իբր թե կան արտահայտություններ, որոնք վերափոխում են աղնվականի ճաշակը: Կաչենովսկու կարծիքով պոետը դուրի է դեզարվեստական ճաշակից և ինչպես չի կարելի հանդուրժել, որ հասարակ մոլեխը ներս մտնի թաղավորական պարահանդես, այնպես էլ Պաշկինի այս երկն անընդունելի է:

Ռեակցիոն աղնվականության այս թշնամական վերաբերմունքը Պաշկինի պոեմի նկատմամբ բացառվում է նրանով, որ պոետը վերսում է իր ժամանակի հնացած պատկերացումները, արտահայտում էր հետաքրքիր խորը գաղափարներ, մեծագույն սիրով պատկերում էր ժողովրդին, դժոխքառականացնում էր դրականությունը:

Եվ կարևորն այն է, որ հակառակ կաչենովսկիների, պրոդրևսիվ քննադատությունը սղջունեց Պաշկինի անդրամիլի պոեմը: «Սմենքը հիանում էին, — գրում էր հետադուրս Բելինսկին, — պոետի գեղեցիկ լեզվով, ստանալովնքերով»:

Իրականում դեպի «Ռուսլան և Լյուդմիլան» ունեցած այս իրարամերժ վերաբերմունքի հիմքն այն էր, որ Պաշկինը դավերգում էր գյուցազուն Ռուսլանին, որը հերոսական կոթի է

մղում իր Երջանկության թշնամիներն՝ ամեն տեսակի չեղնումորների, նախնաների, տհաժւոյ գլխերների դեմ և վեղջիվերջո հաղթում ու ձեռք է բերում իր Երջանկությունը: Չար և բարի ուժերի միջև մղված այս պայքարը և բարի (ժողովրդական) ուժերի հաղթանակի գովերգումը չէր կարող չսկսուիլ պրոգրեսիվ ուժերին և չկատարեցնել ավելաբանական սեփականացի պաշտպաններին: Չպե՛տք է մոռանալ, որ պոեմը գրված է 1817—1820 թվականներին, երբ Պուշկինն արդեն ստեղծել էր սեփական շունչ ունեցող իր բանաստեղծությունները—«Աղատությունը», «Չապաեկն», «Գլուզը»:

«Կովկասի գերին» պոեմը (1821 թ.), Բելինսկու վկայությամբ, ավելի մեծ հիացմունքով ընդունվեց, քան «Ռուսլան և Լյուդմիլան»: Պատճառը երկի զազափարակա՛ն խորը բովանդակությունը և գեղարվեստական վարպետությունն է, որ այդպես փայլուն կերպով դրսևորւում էր պոեմը:

Իր ազատամիտ ոտանավորների՝ համար Պուշկինը 1820 թվին աքսորվեց: Նա կարծում էր, թե լինելով աքսորական՝ Հալալում և Կովկասում, որոշ ազատություն կունենա, հեռու կլինի ցարական կառավարության ամենատես աչքերից, ամեն ինչ լսող ակա՛նջներից: Բայց շուտով նա զգաց, որ իրոք է ազատություն երազել: Միջակ, Կովկասում էլ, ինքն ազատ չէր: Պոետի այս վիճակը միայն իրեն համար չէր բնորոշ: Միջ վիճակում էին ցարական կառավարության կողմից օտարակիզմի ենթարկված, աքսորված շատ պրոգրեսիվ ուժեր:

Մին ռուս երիտասարդը, որը բախտից հալածված թողել էր մալաբարադը, սղնձական կյանքից հիստիալիված, հուռալքված եկել էր Կովկաս և սքանչանում էր ընտելյան զեղեկություններով, երկնահաս լեռներով, անդնդախոր ահալոր ձորերով, հանկարծ գերի է ընկնում լեռնականների մոտ, դառնում շղթայափակ: Միայն մի պահ նա իրեն ազատ զգաց: Երջանկության բարձունքներից նրան գլորեցին անազատության ձորը:

Բելինսկին վկայում է, որ «Կովկասի գերին» պոեմով ժողովածուստիկա երիտասարդ մարդիկ էին հիացել, որովհետև նրանցից յուրաքանչյուրը նրա մեջ տեսնում էր ավել կամ պակաս չափով իր սեփական վիճակի արտացոլումը:

Մենք, կովկասցիներու առանձնապես չափազանց պարտական

ենք Պուշկինին, ինչպես և Լերմոնտովին ու և Տալստոյին, որոնք իրենց կրկերում հմտորեն պատկերելով Կովկասը և այնպեղ ապրող ժողովուրդներին, գրանով իսկ հակադաս գեր կատարեցին կովկասյան և ուսումնական ժողովրդի բարեկամութեան ամբողջուման գործում։ Թե որքան էր սովորական գերին» պոեմի ազդեցութեանը, երևում է նաև նրանից, որ շուտով սկսեցին լույս տեսնել մի շարք այլ հեղինակների «Կովկասի գերին», ապա «Կիրգիզիայի գերին», «Կալմիկական գերին», «Մոսկովյան գերին» և այլն։

Պուշկինն իր հայրենիքի պատմութեանը գիտեր հիանալի կերպով։ Պատմական կյանքն արտացոլող պոեմներով Պուշկինն արտահայտում է իր հայրենասիրութեանը։ Նա մեծ պաթոսով զովերգել է առաջին պատմութեան հաղթանակները արաբներին թշնամիների նկատմամբ, նա զովել է ժողովրդական սպորտամրուցիչների գեղավարներին։

«Պոլտավա» և «Պրնձյա հեծյալը» պոեմների հերոս Պետրոս 1-ինին Պուշկինը պատկերել է որպես առաջին պատմութեան ռազմական հզորութեամբ վճռական գեր կատարած մի գործչի, որն ապահովեց Ռուսաստանի հաղթանակը 1709 թվի Պոլտավայի ճակատամարտում։

Պետրոս առաջինի կերպարը պոեմում կայծակի պես փայլում և անհետանում է։ Բելինսկին ճիշտ է գիտել Պուշկինի սիրով Մադեպայի սիրտ պատմութեանը երկի կենտրոնը դարձնելու հարցում։ «Ի հարկե, Մադեպայի սերը գեղի Կոչուրեյի աղջիկը,— գրել է քննադատը,— պատմական նշանակութեան ունի Մադեպայի վրա չարացած Կոչուրեյի ամբաստանադրի վերաբերմամբ, սակայն Պոլտավայի ճակատամարտի նկատմամբ այդ սերը ոչ ուղիղ քան մի էպիգոն է, պատմական մանրամասնութեան, իսկ Պոլտավայի ճակատամարտը ինքնըստինքյան վիթխարի նշանակութեան ունի ոչ միայն տոհմից Մադեպայի սիրտ, այլև անգամ տոհմից իրեն, Մադեպայի»։

Պուշկինը գիտակցել է ուղիղ Մադեպայի գավաճանական գործունեութեան քաղաքական ահապուր վտանգավորութեանը Ռուսաստանի համար։ Մադեպան պատկերված է Ռուսաստանին թշնամի ու դավադիր ուժերի գեղավար, օտարերկրյա հակառակության ուժերի միավորող։ Պուշկինը գիտակցել է տալիս այդ

հակառուսական ուժերի անխուսափելի կործանումը, սրովհետեւ նրանք դեմ են գնում պատմութեան պրոպրետարի վարդապետին: Այս առումով պոետը կերտել է Կոչուբեյի հոյակապ կերպարը: Կոչուբեյը կոպիտակից է Պետրոս 1-ինի հետ համադրեցողութեան, Ուկրաինայի և Ռուսաստանի քաղաքական միասնութեան: Նա պատրաստ է գոհվել և զոհվում է, բայց չի դաժանաբանում այդ մեծ դործին: Նա մարմնացած կամք է, նա իր գաղափարներին հավատարիմ մտրդ է և ոչ մի ուժ չի կարող, թեկուզ տանջանքներն զփոխույն մեթոդներով նրան հարկադրել դեմ գնալու իր քաղաքական համոզմունքներին:

Բացառիկ ուժով է պատկերացված Պուտավայի ճակատամարտի տեսարանը, որի նկարագրութեանն սկսվում է.

«Թնդաց Պուտավայն մարան ահեղ» խոսքերով:

«Պուշկինի բարբ պոեմներէ, — դրել է Բելինսկին, — առաջին անգամ «Պուտավայ»-ի մեջ նրա ոտանավորը հասավ իր լրիվ զարգացման, ամբողջապէս դորձավ պուշկինյան»:

Իդեալական բովանդակութեամբ և զեղարվեստական կատարելութեամբ «Պոնիճյա հեծյալը» պոետը պատկանում է Պուշկինի և ուսաց դրականութեան ամենաազդէրնինսղ երկերի թվին: Զնայած նրան, որ մեկ վարից ավելի ժամանակ է անցել նրա լույս տեսնելուց հետո, բայց մինչև այժմ էլ շարունակում են նոր մեկնաբանութեաններ տալ այս գործի հիմքում ընկած իդեալներին:

Բելինսկին գրել է.

«Այո, այս պոեմը — ամենահամարձակ, ամենադրամադրոգ ապոթեոզն է Պետրոս Մեծին, որպիսին կարող էր ծնունդ առնել այնպիսի պոետի գլխում, որը ամբողջապէս արժանի է Ռուսաստանի մեծ վերանորոգչի երգիչը համարվելու»:

Դ Բ Ա Մ Ա Ն Ե Ր Ը

Պուշկինը հանդիսացավ ուժն դրամատուրգիայի հիմնադիրը և խոշոր ներկայացուցիչներից մեկը: Մինչ պուշկինյան ուսու գեղարվեստական դրականութեան մեջ նշանակալի դարգացում էր ստացել կոմեդիան, բայց դրաման դառնում էր շատ ցածր իդեալական և զեղարվեստական մակարդակի վրա: Պուշկինով նոր էտապ

սկսվեց ռուս զբամատուրգիայի սլաոմաւթյան մեջ: Նա առաջին անգամ ռուսական աղբայրին գրամատուրգիան բարձրացրեց համաշխարհային նշանակութեան տնտիւնին: Պուշկինն զգտագործելով համաշխարհային գրամատուրգիայի փորձը և տմենից առաջ շեքսպիրյան գրամատուրգիայի փորձը, մնաց ինքնուրուշն, ռուսական աղբայրին կողմիւտով, բերելով գրամատիկական արվեստի նորութեաններ:

Պուշկինը գիմելով սլաոմական թեմատիկային, անցյալ սլաոմական գեպքերն աշնայն է սլաոկերացնում, որ գրանք գտնում են վերին աստիճանի ակտուալ: Հայտնի է, թե ինչպես նրա Ճիւրիս Գոգուշովք գրաման ցարը չցանկացավ հրատարակել: Յարի միտումն աշն էր, որ արմատապես փոխվի գրամայի քաղաքական բովանդակութեանը: Իսկ պիեսի քաղաքական բովանդակութեանը սլալատական կշանքի ինտրիգները, երկպառակութեանները, գահի համար մղվող պայքարի, օտարերկրյա ուժերի հետ համագործակցելու և հայրենագաղության մեքկացումն է:

Պուտն աշնայն է նկարագրում, որ ընթերցողը սլարդ սլաոկերացնում է Դմիտրիի հայրենագաղ, գաղմճանական գործունեութեանը, Բորիս Գոգուշովի ողբերգութեանը իր մեջ չէ, աշն սլաոմական աշն ծանր իրագրութեանները, սրի մեջ նա գործում է:

Պուշկինը հանգես բերեց և ժողովրդին, որը իր վերաբերմունքն է ցուցաբերում քաղաքական իրադրութեանները հանգես: Նա աշնպիտով ստեղծեց Ռուսաստանում առաջին ամենախոշոր քաղաքական գրաման, որպիսի տրագիկան հետագայում գարգացավ:

Պուշկինը Ճիւրիս Գոգուշովք-ի մեջ նովտար է նաե գրամատիկ արվեստի բնագաղմում: Նա չի ենթարկվում հին շարուն գարձած աշն մեթոդին, ըստ սրի գրաման, կամ ողբերգութեանը բաղկացած էր լինում երեք-չորս կամ հինգ գործողութեանից: Պուշկինի մտա ըստը սլաոմական գործողութեանները գարգանում են քսաներկու սլաոկերի մեջ: Աշն սլաոկերները սլալմանավորված են նախորդներով և սլալմանավորված են հետագա գործողութեանները:

Հակագրվելով 18-րդ դարի գրականութեան կրտսիցիվին, Պուշկինը խուտալում է երկար, ձանձարի մենախոտութեաններից: Նրա սլաոկերների զինամիկան չգերազանցված է: Նա չունի

11
ուչ մի ալիւրդ պատկեր, նախադասութեան: Երա դրամատիկ
արվեստան աշխարհի կատարելութեան հասած, որից շատ բան են
սովորել և շատ բան ունեն սովորելու ուսու և համաշխարհային
գրականութեան վարպետները: Պուշկինը ուսու գրականութեան
մեջ առաջին ամենալավ օրինակը ալեց, թի ինչպես կարելի է
վերին աստիճանի հակիրճ խոսքերով ու վառ գուններով մոնու-
մենտալ, գեղարվեստական կերպարներ կերտել: Հայր Պիմենի,
Բորիս Գոգոլովի, Վասիլի Շուշկու, Գրիգորի Օտրեպովի, Մա-
րիայի և այլոց կերպարները մնայուն գեղարվեստական կերտ-
վածքներ են: Հետագայում նա հակայական ազդեցութեան ունե-
ցավ Գոգոլի և հետագա գրողների վրա, սովորեցնելով նրանց
ինքնաբերական տիպեր կերտելու վարպետութեանը:

Ռուս դրամատիկ արվեստի պատմութեան մեջ հետաքրքիր
մոմենտ է Պուշկինի «Ժլատ ասպետը»: Պուշկինը գեղարվեստա-
կանորեն վերարտադրում է ֆեոդալական կարգի քայքայման և
բուրժուական հարարերութեաններին կողմավորման պրոցեսը:
Բուրժուական հարարերութեաններին պայմաններում սեփական-
ութեան կալվածքային ձեռքի սեփականի է գրամականը, ոսկին:
Սեփականութեան աչք երկու տեսակները ֆեոդալիզմի և բուր-
ժուակալի պայմաններում, իրենց աշխարհակ, աշխատող ազ-
դեցութեանն են ունենում այն մարդկանց վրա, որոնք նրանց
գերին են դառնում:

«Ժլատ ասպետի» մեջ, Պուշկինը պատկերում է հարստու-
թեան, ոսկի ձեռք բերելու ամաղակային, գաղանարար ընդլայն-
ված ասպետը խոստովանում է, որ իր գանձերը ձեռք են բեր-
ված անհաշիվ արքունիքների, մարդկային կյանքերի գնով: Տիրե-
լով ոսկուն, նա այն գաղափարն է փայլալուծ, որն իշխում է
ամեն ինչի վրա: Եթե նա ուզենա, թաղափորութեաններ կկոր-
ծանի, եթե ուզենա, պալատներ կկառուցի, եթե ուզենա, մա-
ղապատութեան կկատարի: Նա կորցրել է այն ամենը, ինչ
մարդկային է: Նա հայր է, բայց գերազասում է, որ հարազատ
զավակը կործանվի, քան թե իր գանձերից որեէ բան պակասի:
Նա կուտակել է գաղանային մոլուցքով:

Պուշկինը ոչնչացնող քննադատութեան է ենթարկել այդ
ոսկու թաղափորներին, նրանց, որոնք կորցրել են ամեն ինչ—

մարդկայնությունը, խիղճը, քնտանիքը և պահպանել են մի հրեշտավոր բան՝ ոսկուն տիրելու մոլուցքը:

Կ. Մարքսը զիտականորեն բացատրեց այս հակամարդկային մոլուցքի պատճառները: «Դրամը, որն ունի ամեն ինչ գնելու, բոլոր առարկաները յուրացնելու հատկություն, այդպիսով դառնում է գեր-յուրացման առարկա: Նրա եասկությունն ունի-վերսալությունը նրա էության ամենակարողությունն է. դրա համար նա համարվում է ամենակարող: Դրամը կալատ է պահանջմունքի և առարկայի միջև, մարդու կյանքի և ապրուստի միջոցի միջև: Բայց այն՝ ինչ ինչ համար միջնորդավորում է իմ կյանքը, ծառայում է ինձ նաև որպես միջոց ուրիշ մարդկանց կեցության՝ ինձ համար: Այդ ինձ համար մի ուրիշ մարդ է» (Կ. Մարքս և Ֆ. էնգելս, Արվեստի մասին, էջ 50):

Ե Վ Գ Ե Ն Ի Օ Ն Ե Գ Ի Ն

Այս չափածո վեպը ֆույտուն մի դարձ է գեղարվեստական խոսքի պատմության մեջ, դա համաշխարհային գրականության զրույթորձոցներից մեկն է:

Բեկինսկին Պուշկինի այս պոեմն անվանել է «ուսուսկան կյանքի հանրապետարան»: «Եվգենի Օնեգին»-ը պատմական մի փաստաթուղթ է 19-րդ դարի առաջին քառորդի մասին, որով կարելի է պարզ և բաղմոսկողմանի գաղափար կադմել ուսուսկան այդ փամանակի տնտեսական-քաղաքական-կուլտուրական կյանքի մասին:

Պուշկինը Օնեգինի հոր տնտեսության պատմության հիման վրա նկարագրել է ֆեոդալական տնտեսության քայքայման տիրիկ պատկերը:

Ազնվականությունը կորցրել է իր ստի աակի հողը: Հալածությունը հեղհեղա կուտակվում էր դործարար, բուրժուականացող տարրերի ձեռքը: Սակայն ազնվականությունը միանգամից չէր կորսվ հրաժարվել իր նախկին վայելքներից: Ինչպես Պուշկինն է նշում, պարսպով անգամ պարահանդեսներ էին կադմակերպվում:

Պուշկինը պատկերում է գյուղացիների անլուր շահագործման տեսարանները:

Գյուղացիության անտանկի վիճակը հասարակության ավելի առաջագիծ տարրերի մեջ առաջացնում էր առեկռթյուն, տնտեսականության զգացում գեպի իշխող կարգերը: Շահագործման ծանրագույն տեսակը՝ կոսը, շահագործման համեմատաբար թեթև տեսակով՝ բեղյառով փոխարինելու փորձեր էին կատարում: Մյուս մասը (ինչպես Պուշկինը իր պոեմի 10-րդ գլխում մասամբ նկարագրել է դադանագրով) չլավարարվելով դրանով, ձգտելով վերացնել ճորտատիրական կարգերը, միավորվում էր դադանի կազմակերպությունների մեջ և ակտիվ պայքարում այն ուժերի դեմ, որոնք կառչել էին ճորտատիրությունից:

Ժակոպին իրավացիորեն նկատել և Պուշկինին հայտնել է, թե «ամեն մի զործող (գեկարբիստի) թղթերում քո ստանալորներն են գտնվում»:

Պոեմի 10-րդ գլխում Պուշկինն Ալեքսանդր 1-ինին անվանում է թույլ, նենգ, ինքնիշխան, ճաղատ գլխով և պճնասեր, աշխատանքի թշնամի, որն անակնկալ կերպով փառք ձեռք բերեց: Վերջապես, Պուշկինը տեսել է, որ Ռուսաստանում առկայծում են «հրդեհի կայծեր», կազմակերպվում են գեկարբիստական խմբակներ. միավակություն, ճորտատիրություն վերացման մասին ճառեր են ասում և մեկանյութիկ Յակուշկինը կարծես լուսլայն մերկացնում էր արքայասպան գաշույնը: Տեսնելով մի Ռուսաստան, նա փոփոխվում էր Ռուսաստանի մի այլ իդեալ: Դեկարբիստների հյուսիսային կազմակերպության հետ միասին Պուշկինն այստեղ պատկերել է նաև գեկարբիստների Հարավային կազմակերպությունը, ուր, սլոնտի ասելով, «Պետելը... գաշույն և զորք է հավաքում»:

Այսպիսի սիրով և համակրանքով են պատկերված գեկարբիստները, ժամանակի առաջավոր մարդիկ, որոնց Պուշկինը զրականորեն է բնութագրել, հակադրելով նրանց ցարական այն ուժերին, որոնք արդեալապես էին Ռուսաստանի առաջնությունը:

Նկարագրելով կարիքների տանը ճատյանային հյուսիս կիսմ ազնվականներին, Պուշկինը նրանց պատկերում է մեկը մյուսից ալլանդակ կերպարանքով: Ահա կալվածատերերի այդ կարգը: Գլխավորին նա բնութագրել է որպես «մուրացիկ գյուղացիների տեր», իսկ պաշտոնաթուղ խորհրդական Ֆլյանովին՝ «բամբասող, ծեր սրբիկ, շատակեր, կաշառակեր և ծաղրածու»: Խոսելով աղնյա-

կան Զաբեկիւմ մասին, պոետն այլ կերպ չի բնութագրում, քան ժողովարար, թշվառամոլական շայկայի առաման: Պուշկինը երբ խոսում է գեղջիկների մասին, դործ է ածում հաղեղելի «գեղական» բառը, իսկ աղնավառն, բեթե բարձր տեղ աղջիկներին մասին՝ «գեղչոն(չա» արհամարհական բառը: Պետք է խորին սիրով և համակրանքով է նկարագրում Տատյանայի հիանալի դայակին: Ինքը, Տատյանան միշտ էլ, անգամ Պետերբուրգում աղնավառն վերին խավերի վաճառք տնիկն դարձած՝ եբազում է իրենց գյուղի մասին, գյուղի պարզ կյանքի մասին: Ժողովրդագրություն լին է այս ամբողջ երկը, որն այդ պատճառով առավել հրապուրիչ ու արժեքավոր է:

Պուշկինը գյուղացիներին մասին խոսելիս, ի հակակշիռ աղնավառնների և կալվածատերերի, միշտ համակրությամբ է արտահայտվում նրանց նկատմամբ: Եթե նրա մոտ գյուղացին երևում է, ապա դա շահագործվող, բայց շահագործման մեջ էլ երգ առող գեղջուկն է, որը կամ վար է անում, կամ հունձ, կամ հովիվ է, որը զործելով իր գույնզգույն տրեխը, Վոլգայի ձրկնորսների մասին է երգում:

Նա վարպետությամբ է կերտել իր ժամանակի տիպերին՝ Եվգենի Օնեգինին, Վլադիմիր Լենսկուն, Տատյանա Լարինային: Ինչքան կյանք կա նրանց մեջ, Այնիվ ձգտումներով, երջանկության բուռն սրտումներով լի են նրանք, բայց ավելի Ինչքան գժրախոս են նրանք, որ ապրում են միապետության, ճորտատիրության շղթաների մեջ: Օնեգինը հիասթափվել է շրջապատող հասարակական կյանքից, բայց դեռ չի հասել նոր հասարակական կյանքի պարզ ըմբռնման: Լենսկին, պոետական, մարդկային վեհ գաղափարներով լի մի երիտասարդ է, որը նոր է դիտակցական կյանք սկսում, բայց դեռ չծաղկած սպանվում է և մոռացվում անդամ նրանց կողմից, սրանք նրա երջանկության աղբյուրն էին: Տատյանան խորը և մաքուր զգացմունքների տեղ է, հաստատակամ և շիտակ բնավորությամբ, հումանիստ և բարեգործ, հավատարիմ ամուսին և բարի մայր գաղնալու իգեալով: Տատյանան, որ արժանի էր երջանիկ կյանքի, իրեն խորապես գժրախոս է համարում: Նա իրեն մենակ է զգում:

Մի մտածիր, ոչ ոք չսենեմ,
Զի հասկանում ինձ ոչ մի մարդ.
Խամբեց միտքս երիտասարդ,
Եվ լուս անխոս պիտի կորչեմ:

Պուշկինի այս ստեղծագործությունը քաղաքական մոտիվն այն է, որ սքանչելի են այս ուստի մարդիկ, բայց նրանց խեղ-
զում են միապետական, ճարտատիրական պայմանները:

Այն պայքարը, որ Պուշկինը մղում էր հանուն աղքատին
գերականության ստեղծման, հաղթանակեց «Եվգենի Օնեգին»
պոեմում: Ռուսական իրականությանը ուսուսական ողով և կոլտ-
րիտով արտացոլվեց այս ստեղծագործության մեջ:

Պետերբուրգը և Մոսկվան, դավառական կալվածատիրու-
թյունն ու գյուղացիությունը, Օդեսան ու Նովոռոդը, բնու-
թյունն ու հասարակությունը իր բոլոր շերտերով Պուշկինը
բարձր գեղարվեստականությամբ պատկերել է այս հանճարեղ
պոեմում:

Բեկինսկին իրավացիորեն գրել է. «Առաջին ճշմարիտ աղ-
պային ուսուսական չափածո պոեմը եղել և մնում է Պուշկինի
«Եվգենի Օնեգին»-ը»:

Պուշկինը ստեղծեց, այսպես կոչված, «Օնեգինյան տողաչա-
փություն»: Պոետը այստեղ ստեղծում է իր մտքերն արտահայ-
տելու յուրահատուկ շրջանակներ և ինքը խոսողներն ենթարկվում
է այդ շրջանակներին: Սակայն ստեղծագործությունը հյուսվում
է դարմանայի վարպետությամբ, պարզությամբ, հանգերը և
վանկերը համապատասխանում են այնքան բնականորեն, այն-
քան անբռնադրստիկ, որ ընթերցողը չի կարող ցույց տալ թե-
կադ մեկ օբյեկտ, երբ պետք միտքը դնած, աղավաղած լինի
հանուն ձևի: Սա ուստի լեզվին կատարյալ տիրապետելու լավա-
զյան ցուցանիշներից մեկն է, ուստի բառապաշարին կատարելա-
պես տիրապետելու ցայտուն վկայությունը:

Պոեմում աչքի են ընկնում լիրիկական շեղումները, որոնք
թեև սրտ չափով զանդաղեցնում են հիմնական գործողություն-
ների զարգացումը, բայց խիստ կարևոր են: Այլ կերպ պոետը ի
վիճակի չէր լինի այդքան սեղմ, հակիրճ գույներով պատկերել

ռուսական ողջ կյանքի հանրագլխաբանը, կերտված տնայրիւի կլասիկ պարզութեամբ ու ռեալիզմով, սբից ավելի կատարյալը զգվար է պատկերացնել:

Պուշկինի Ճեվգենի Օնեգինը համաշխարհային ռեալիստական գրականութեան ամենամեծ ամենատալ գործն է:

Ա Ր Զ Ա Կ Ը

• Պուշկինը ոչ միայն ռուսական բանաստեղծութեան, այլև՝ գլխաւի, զրամատուրգիայի, այլև արձակի հիմնադիրն է:

Մինչ պուշկինյան արձակը ռուս գրականութեան մեջ թույլ էր զարգացած: Մեծ մասամբ իշխում էին սենտիմենտալ և ուժմանտիկական պատմվածքները:

Պուշկինն ստեղծեց բարձր իդեալականութեամբ և գեղարվեստականութեամբ ռեալիստական արձակը: Նա հիմք դրեց այն արձակին, որը բուռն զարգացում ապրեց 19-րդ դարում, զարձալ համաշխարհային արձակագրութեան ամենաուժեղ հոսանքը և վճռական ազդեցութեան ունեցալ նրա վրա: Հագիւթ թի Ռուսաստանում կարելի լինի գտնել մի գրող, որը այս կամ այն չափով սովորած չլինի Պուշկինի արձակից:

Պուշկինն արձակի ամենափայլուն օրինակները տվեց, գրելով պատմվածքներ, վիպակներ, վեպեր (Քելկինի պատմվածքները, «Գորյուխին գյուղի պատմութեանը», «Դուրբովսկին», «Կապիտանի աղջիկը», «Պետրոս մեծի Արապը»), որոնք ընթերցողի մեջ հիացմունք են առաջացնում իրենց մաքրելի, կարճ ու հստակ արտահայտութեաններով: Պուշկինն իր պատմվածքներում ու վեպերում զրահորում է զարմանալի բազմադիտութեան: Նա մերթ պատկերացնում է ռուսական գյուղական, կալվածատիրական կյանքը, կենցաղն ու սովորութեանները (Քելկինի պատմվածքները, «Գորյուխին գյուղի պատմութեանը»), մերթ Պետրոս առաջինի կյանքը, նրա արտալ Հաննիբալի հետ, մերթ հարստ կալվածատերի ճնշման տակ սնանկացած աղքատ ազնվական Դուրբովսկին և նրա գյուղացիներին, երբեմն գիմում է Արզումանի գրավման պատմութեանը (Ճանապարհորդութեան գեպի Արզուման), մերթ մեծ կռաւով պատկերում 18-րդ դարի 70-ական թվականներին գյուղացիական ապստամբութեանը Նիկոլայի Պուգաչովի գլխավորութեամբ:

«Գիւրբաղակի» վիպակում Պուշկինն իրար հակադրում է կալվածատիրական կյանքի անտաղոնխտական երկու ուժեր:

Պուշկինի պատկերած Օրինա Եգորովնան, գյուղացու աղա Միտին, կառապան Անտոնը, դարբին Արխիպը, ծառա Դրիշան իրենց մարդկայնությամբ լավագույն գրակա հերոսներ են վեպում: Կառապան Անտոնը հետեյալ սարսափն է արտահայտում Տրոյեկուրովի իշխանության մասին. «Կիրիլ Պետրովիչի իշխանության տակ Աստված մի արասցե: Առանց էջ էլ նրա մարդկանց գրությունը վատ է: Իսկ եթե ուրիշի մարդիկ (ճորտերը Ռ. Հ.) անցնեն նրա իրավունքի տակ, նա նրանց կաշին էլ կքերթի, միսն էլ»:

Դյուղացիության ասուլիսները կալվածատիրության դեմ և նրանց զործունեությունն այտուղ տարերային բնույթ ունեն: Իսկ այդ տարերային բողոքը երբեմն վեր է ածվում ապստամբության, որի արտացոլումը Պուշկինը տվել է իր «Կապիտանի աղջիկը» վիպակում:

«Կապիտանի աղջիկը» գրելու համար Պուշկինը չբավարարվեց Պուլգաշովի մասին պաշտոնական տվյալներով, նա եղամայն պատմական վայրերում, սւր տեղի էր ունեցել Պուլգաշովի շարժումը:

Յարսկան լրտեսները, որոնք հետևում էին մեծ բանաստեղծի ամեն մի քայլափոխին, տառաքները կրճատցնելով դիտում էին թե ինչպես Պուշկինը գյուղից-գյուղ, քաղաքից-քաղաք էր դնում, խոսեցնում գեպքերի մասնակից ծերունիներին, հիշողություններ լսում և նյութեր հավաքում պուլգաշևյան ապստամբության մասին: Այսպիսով, Պուշկինը կերտեց Պուլգաշովի կերպարը տվյալ շուտ ֆուկսորային նյութերի վրա և այդ պատճառով այդ կերպարը գերծ է աղնվականների պատկերած ազավաղումներից:

Պուլգաշովի ապստամբությունը Պուշկինը պատկերում է որպես մի շարժում, որին մասնակցում էին զանազան ժողովուրդներ, որոնք տանջվում էին ցարական կալվածատիրական լծի տակ: Ուրալի գործարանային ճորտ, Սիբիրի տքստբավայրից երեք անգամ փախած Աֆանասի Սոկոլովը (Խյուպուշկան), կապակեմեկյան Պուլգաշովը աստիճանաբար և լցված դեպի գյուղացիներին հարստահարողները, գյուղացիները դարավոր վրեժ են

յութում նրանցից, որոնք խաչընդստ են հանդիսանում իրենց շարժմանը: Պուգաչովը և նրա մարտակիցները լավ հասկանում են, որ ազնվականներին, կալվածատերերին անհնարին է այլ կերպ հասկացնել ժողովրդի իրավունքները և պատռվածքը, քան նրանց դեմ կռիվելով: Չէ՞ որ ազնվականներն էլ անխնա կոտորում են զյուզացիներին, իրենց դեմ բմբուսացողներին, որպիսի պատկերներ Պուշկինը նկարագրել է իր այս վիպակում:

«Կապիտանի աղջիկը» փայլում է պատմողական ուարդ, խոշորաստ, քաղցրահնչյուն լեզվով:

Ժողովրդայնությունը, պատմական դեպքերի ամբողջական ևնայ տրտացողումը, կերտած ախպերի կենդանի լինելը, ահա Պուշկին-արձակագրի լավագույն հատկությունները:

Վիպակի յուրաքանչյուր գլուխը զարգարված է էպիգրաֆներով, վերցված ժողովրդական երգերից, ժողովրդական ստեղծագործություններից, որոնք սքանչելի են ու լիրիկական և առանձին հրապույր են տալիս զործին: Հաջող է ընտրված հատկապես «Սեր» վերնագիրը կրող գլխի բնարանը: Հրապուրիչ է նաև Պուգաչովի սիրած բուռլակների երգը:

Անհնար է սպառել Պուշկինին մի այսպիսի համառոտ ուրվագծի մեջ: Նա խոշոր դեր կատարեց և ռուսական գեղարվեստական հեքիաթների կատարչալ մշակման գործում, ստեղծելով անմահ «Հեքիաթ Սալթան թագավորի մասին», «Ոսկի ձկնիկը» և այլն: Նա հանդիսացավ ռուս քննադատական, էսթետիկական մտքի լավագույն ներկայացուցիչներից մեկը: Նա վերին աստիճանի խելացի, խորիմաստ մտքեր է արտահայտել ինչպես ռուս, նույնպես էլ ևլրոպական գրականության մասին:

Այս բոլորով հանդերձ Պուշկինը դարձավ մեծ հեղինակություն ոչ միայն իր հայրենի երկրում, այլև Արևմուտքում և Արևելքում: Նրա ստեղծագործություններն սկսեցին թարգմանվել եվրոպական և արևելյան ժողովուրդների լեզուներով դեռ պսևտի կենդանության օրոք: Անհնար է պատկերացնել 19-րդ դարի համաշխարհային գրականությանը առանց Պուշկինի ազդեցության: Հայ ժողովուրդը նույնպես ցուցաբերեց իր խորը հետաքրքրությունը Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի գրական ժառանգության նկատմամբ:

Հայ հասարակական կյանքն այնքան հարուստ է այս հարցին վերաբերվող նյութերով, որ զրանց լրիվ լուսարանությունը կպահանջի ընդարձակ ստույգագրություն: Ներկա դասախոսությունն ընթացքում կաշխատենք տալ այս պրոբլեմի միայն ընդհանուր բնութագրերը:

Հայ հասարակական միտքը Ա. Ս. Պուշկինի կյանքով ու ստեղծագործություններով հետաքրքրվել է ղեկավարողների կենդանությունից սկսած, իսկ սովետական մեր օրերում, շատ ու ավելի հետաքրքրություններ և անսահման սեր է առաջացել մեր ժողովրդի մեջ ղեկի ըստ ժամանակների ամենամեծ բանաստեղծներից մեկը — Պուշկինը:

Այդ դարավոր պատմությունն առաջին էտապը պետք է համարել 19-րդ դարի 30-ական թվականները, երբ Լադարյան ճեմարանի դասախոս Մ. Էմինը իր սուսնողներին կարդացել է Պուշկինի «Կովկասի գերին» և «Բախչիսարայի շատրվանը» պոեմները: Հայերեն թարգմանություններ: Դժբախտաբար այդ ձևով զբաղվել են:

1837 թ. սպանվել է Ա. Պուշկինը և 1841 թ. Մ. Լերմոնտովը: Ընդամենը չորս տարվա ընթացքում ուսն ժողովուրդը, հանճարների դանիճ միապետությունից սկսած, կորցրեց իր ամենամեծ բանաստեղծներին: Հակառակ ցարական կառավարության թշնամության, Պուշկինի և Լերմոնտովի երկրպագուների բանակն աճում էր ինչպես ուսն, նույնպես և նրա հետ պատմական մի բախումով ապրող ժողովուրդների, որոնց թվում և Հայ ժողովրդի մեջ:

Այս պայմաններում 1843 թ. Մոսկվայում լույս տեսավ Լադարյան ճեմարանի աշակերտ Հ. Համազասպյանի ուսն զբոսներից կատարած թարգմանությունների ժողովածուն, ուր Ժուկովսկու, Լերմոնտովի, Բարատինսկու, Գրեկովի և Գրեկովի հետ միասին թարգմանված էր Ա. Ս. Պուշկինից՝ տասը համադրություն:

Ուշագիշտ ընթերցողը կնկատի, որ հայ թարգմանիչը Լերմոնտովի և Պուշկինի առանձնապես այն բանաստեղծություններն է թարգմանել, որոնց մեջ արտացոլված է պոետի քաղաքական ծանր վիճակը իշխող միապետություն և ճորտատիրու-

խյան պայմաններում: Պուշկինից թարգմանվել է՝ «Ծով և ցամաք», «Կովկաս», «Մարդարե», «Մի տար ինձ, տեր», «Ռուսալկա»-ն, «Սոխակը» և այլն:

19-րդ դարի 50-ական թվականներին որոշակիորեն զգացվում է Պուշկինի ազդեցութունը հայ հասարակական կյանքի վրա: Պրսկերսկի միտքն աշխատել է պատուել գոյություն ունեցող որոշ արդեւքներ և մասսայականացնել Պուշկինի երկերը, իսկ ռեակցիան մամուլը հանցավոր լուսթյուն է պահպանել Պուշկինի մասին: Հայտնի է, որ հայ իրականության մեջ 19-րդ դարի 50-ական թվականներին գեմեղնատախան շարժման և նրա տեսական մտքի ամենավառ դեմքը Մ. Նալբանդյանն էր, ուսումնական գրականության լավագույն բարեկամը:

Հիշատակության արժանի է, որ Միք. Նալբանդյանը «Ազատություն» ռուսամտերը գրել է Պուշկինի «Ազատություն» ներքորի ազդեցության տակ: Հայ մեծ ռեուլցիոնները 50-ական թվականներին գրել է «Բանաստեղծ» ռուսամտերը Պուշկինի նմանութամբ: Նա թարգմանել է Պուշկինի «Ձերքիկ երգը»:

19-րդ դարի 60-ական թվականներին «Հյուսիսային»-ի պետները մեկը՝ Սմբատ Շահազիզը, հայ գրողների մեջ առաջինն էր, որ բանաստեղծական խոսքով գովերգեց պոետին:

Իմ սրտիս սիրած պոետս գու անգին,

Որ գյուլիկ ես ինձ սիրո գովանքով...

~ ~ ~ ~ ~

80-ական թվականներին հասարակական առաջագիտ խավերի մեջ ուժեղանում է գեպի Պուշկինը եղած հետաքրքրությունը: 1883 թվականին երիտասարդ ազդանդավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը թարգմանեց Պուշկինի «Պոետին» ռուսամտերը, իսկ «Բաղմավեպ» ամսագիրը նրա «Ճանապարհորդություն» գեպի Արզրում» գեղարվեստական ակնարկից առգագրեց մի հատված:

Պուշկինի սքանչելի հեքիաթների թարգմանության պարծում երախտիք ունեն Գամառ Գաթիկյան, սբթ թարգմանեց նրա «Ոսկի ձկնիկը», և անմահ մանկագիր Ղազարոս Աղայանը, սբթ այդ հեքիաթի ավելի հաջող թարգմանությունը տվեց:

19-րդ դարի 80-ական թվականներից սկսվում է Պուշկինի

սահղծագործությունները տեսական գնահատումը հայ մամուլում: Ես նկատի ունեմ 1880 թ. լրերն ալ «Մշակ» թերթում տպագրված անստորագիր հոգովածը և 1882, 1887 թվականներին գրված մի քանի հոգովածները այլ պարբերականներում:

80-ական թվականների վերջում և 90-ական թվականների ընթացքում առանձնապես ուժեղանում է հայ հասարակական մտքի հետաքրքրությունը գեղի Պուշկինը, որը բացատրվում էր պոետի ծննդյան 90-ամյակի և վերահաս 100-ամյակի նախապատրաստությամբ: Ակտիվություն է նկատվում հեղինակի նոր երկերի թարգմանության և նրա մասին նորանոր քննադատական հոգովածներ տպագրելու մեջ:

Պուշկինի սահղծագործությունների թարգմանությունների և նրա զործունեության տեսական գնահատման մեջ ունեյի կերպով իրար դեմ առ դեմ հակադրվում են երկու իրարամերձ պրոդերսիվ և ուսուցիչ — ուղղություններ:

Ռեակցիոն ուղղության ամենացայտուն ներկայացուցիչներ հանդիսացան Հովհ. Գնունին, Ն. Թուրյանը: Պրոդերսիվ ուղղության ղրքերից Պուշկինին գնահատական տվեցին Ալ. Ծատուրյանը, Ավ. Արատիտյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը:

1897 թ. Մոսկվայում լույս տեսնող «Նոր փորձ»-ում Հովհ. Գնունին տպագրեց իր «Ինչ է կտակել իր աղբին Պուշկինը» հոգովածը: Ենեյով ռեակցիոն ղրքերից, նա ժխտում է Պուշկինի մեծությունը, նրա սահղծագործության մեջ նա չէր տեսնում հասարակական նշանակություն:

Հետագիմականների ֆրասակար տեսակետների դեմ 1897 թվականին դուրս եկավ Ավ. Արատիտյանը՝ «Մուրճ» ամսագրում, ուր քննադատության կենթարկելով հայկական պիսարեչինայի այս այսպիսի արտահայտությունը, ցույց տվեց, որ «Նոր փորձը» ձգտում է հայ քննադատությունը կտ մղել և որ Պուշկինի մասին նրա հայացքները քննադատության չեն գիմանում:

Հայտնի է, թե ինչպես Նիկոլայ կախոգի կառավարությունը Պուշկինին զուպայով ժողովրդից և հանձնարարեց նրան թաղել ղաղտազուղի, առանց հանգիստվորության, մինչդեռ Պուտում հրատարակվող «Ծագիկ» պարբերականը տպագրելով Ն. Թուրյանի հոգովածը, իղեալականացնում էր ցարիզմը, պատկերացնե-

լով այնպես, թե Պուշկինի թագուամբ կատարվեց փառավոր կերպով:

Դժբախտաբար այդ ժամանակ Պուշկինի մասին սխալ հայացքներ է արտահայտել և Ստ. Լևիտյանը, որը Պուշկինի 100-ամյակի առթիվ զրեց ընդարձակ հոդված և հանդես եկավ Պուշկինի մասին հայերեն լեզվով գրված առաջին դեքով:

Պուշկինի մասին սխալ հայացքները հայ հասարակական առաջավոր մտքի կողմից ենթարկվեցին բավական խիստ քննադատության: Այդ տարիներին պրոդրեկտիվ-դեմոկրատական միտքի արտահայտիչն էր բանաստեղծ Ա. Մատուրյանը: Նա հանդես եկավ մի քանի հոդվածներով, որոնց մեջ արտահայտում էր հայ առաջավոր հասարակական խավերի հայացքները, սերը և հարգանքը զեպի ուսս ժողովրդի պարծանք՝ Պուշկինը:

«Այս երեք օրը,—գրել է Ա. Մատուրյանը պուշկինյան օրերի մասին,—կարելի է ասել, ամենալուստադարձ օրերն էին ուսս ժողովրդի կյանքում»:

Ալեքսանդր Մատուրյանը պայքարելով Պուշկինին առողջ, բայց կեղծավորաբար իրենց նրա երկրպագուներ համարող ուսս և հայ ուսակցիոն մամուլի և գործիչների դեմ, բացականչում է.

«Այդ ներքուր ընթերցման ժամանակ իմ առաջ կենդանացան Պուշկինին ժամանակակից և նրան անխնա հալածող Բուլգարինների և Կաշենովսկիների խմբակը, որոնց բանաստեղծը կոչել է «զրական գիտուններ»:

20-րդ դարի առաջին քսանամյակում, Պուշկինին բարձր դնահատեց ուսս ղրականության և Պուշկինի մեծ երկրպագու՝ Հովհ. Թումանյանը:

1914 թվականին Լեւոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ գրած «Կովկասի մեծ որդեղիրը» հոդվածում, Հովհ. Թումանյանը գրել է. «Հազար-հազարավոր մեծ մարդիկ են եկել անցել Կովկասից, բայց նրանք բոլորը Կովկասի համար եղել են անցյորդներ, ակոյաններ, բարեկամներ կամ հյուրեր, իսկ որդեղիրն ա շատ քիչ է ունեցել:

Էդ երջանիկ քչերից եղան երկու ուսս մեծ բանաստեղծներ—Պուշկինն ու Լեւոնտովը» (Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 319):

Ըստ հիշատակությանների, հայ պոեզիայի դադաթ Թումանյանը իր զրույցներից մեկի ժամանակ (1915 թ.) տեսել է.

«Պուշկինը մեծ բանաստեղծ է, խոշոր, հոյակապ բանաստեղծ, նուրբ հոսատու թյուն ունի և գեղեցիկ ճաշակ:

Սիրում եմ կարդալ նրա պոեմները—«Պոլտավա», «Կովկասի զերին», «Գնչուները» և մյուսները, բայց նրա դրվածքներից զիտնք որն եմ տմենից շատ սիրում, իսկի չէք կարող երեակայել...» «Зимний вечер»-ը Սիրում եմ էդ բանը, որովհետեւ գերազանցապես ուստական է, շատ է սիրուն ու հաջող» (Թումանյանը քննադատ, Երևան, 1939 թ., էջ 332):

Անհնարին է 19—20-րդ դարի մի քիչ թի հայ նշանավոր բանաստեղծ գտնել, որն այս կամ այն չափով սովորած, ազդված չլինի Պուշկինից:

Պուշկինի փառքի նոր արշավույթ բացվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեալուցիայի հաղթանակից հետո Սովետական Ռուսաստանում և Սովետական Միության կղերայրական մյուս ուսպուրլիկաներում:

Անհրաժեշտ է նշել Պուշկինի ազդեցությունը հայ ինչպես մինչևուրուցին, նույնպես և սովետական ժամանակաշրջանի բանաստեղծության, պոեմի, հեքիաթի, պատմվածքի, վիպադրության, դրամատուրգիայի և թատրոնի վրա: Եթի անցյալի պոեզիայի, մեջ այդ բարերար ազդեցությունը ամենից շատ հաճությամբ կրել է Հովհ. Թումանյանը, սովետական շրջանում՝ այդ ազդեցությունը կրել է սովետահայ պոեզիայի նշանավոր գեմք՝ Նաիրի Ջարյանը: Պուշկինի մասին անհուն բերկրանքով է խոսել ու գրել մեր պոեզիայի պարծանքը՝ Ալ. Իսահակյանը:

Ա. Ս. Պուշկինը հայ իրականության մեջ երբեք այնքան չի մասսայականացվել, որքան սովետական ժամանակաշրջանում, երբ Պուշկինի լավագույն երկերը ժողովածուների մասսայական հրատարակությունների, մամուլի, ուղիոյի միջոցով տարածելու շնորհիվ դարձան ամբողջ սովետահայ ժողովրդի սեփականությունը:

Պուշկինի գրամաներից «Բարե հյուրը» եղել է մեր թատրոնի լավագույն բեմադրություններից մեկը: Սովետական Հայաստանի Ալ. Սպենդիարովի անվան Օպերայի և բալետի թատրոնը տարիներ շարունակ բեմադրել և բեմադրում է Պուշկինի

«Պիկովայա դաման», «Եվդենի Օնեգինը», «Բախչիտարայի շատրվանը»։ Մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարովը երգի է վերածել Պուշկինի բանաստեղծությունները։ Պուշկինը դարձել է մեր կուլտուրական կյանքի կարևոր գործոնը, նա միաժամանակ սովետահայ ժողովրդի ազգային պարծանքներից մեկն է, իր եղբայրակից ռուս մեծ ազգի ամենամեծ պարծանքներից մեկը։ Սովետահայ կյանքի 29 տարիներին ընթացքում Պուշկինի մասին ավելի շատ է գրվել, նրա երկերից ավելի շատ է թարգմանվել, քան անցյալ մեկ դարից ավելի ժամանակաշրջանում։ Էլ չեմ խոսում սովետական շրջանի տեսական մտքի անհամեմատ ավելի ճիշտ, խոր մարքսիստական դնահատման մասին։

Պուշկինի սրբերգական ժանրերի 100-ամյակի կապակցությամբ, 1937 թվականին, հայերեն լեզվով լույս տեսան մեծ պոետի երկերի ժողովածուների առաջին և երկրորդ հատորները, որոնք ընդգրկում են Պուշկինի լավագույն բանաստեղծությունները, պոեմները, արձակը, Բաղմաթիվ առանձին հրատարակություններ են ունեցել նրա հեքիաթները, պոեմները, գրամատիկ երկերը։ Սովետահայ թարգմանիչների մի պլեադա աշխատել է Պուշկինի երկերի հայերեն թարգմանություն վրա՝ այդ թվում Դ. Դեմիրճյանը, Ն. Զարյանը, Գ. Մարյանը, Գ. Բորյանը, Գ. Սեալը ավարտել է «Եվդենի Օնեգին»-ի թարգմանությունը։

Պուշկինի մասին հովվածներով հանդես են եկել՝ Ա. Խահակյանը, Ս. Զորյանը, Արսեն Տերտերյանը, Արտաշես Կարինյանը, Արազին, Նաիրի Զարյանը, Ս. Մաղմանյանը, Արտ. Ուկերչյանը, Ա. Ղանալանյանը և շատ ուրիշները։

Սովետահայ միաքը Պուշկինին բարձր է դնահատել ոչ միայն նրա երկերի թարգմանություններով, նրա ստեղծադրածությունների զիտական գնահատմամբ, այլև գնահատման լավագույն տեսակներից մեկով— Պուշկինին բանաստեղծություններ նվիրելով։

Բնորոշն այն է, որ սովետահայ պոետները զիմում են Պուշկինին, սրպես իրենց պոետական սուսույցի։

Դուրզեն Բորյանը 1937 թ. Պուշկինին նվիրված «Ողջույն քեզ, պոետ» ոտանավորում գրել է.

Քեզ, որ ստալինյան այս լույս օրերում

Դարձար ավելի անխորտակ ու մեծ,

Ինչպես չի եղել և ոչ մի դարում,

Անցած աշխարհի ոչ մի բանաստեղծ։

Պուշկինին նվիրված մեծ պաթոսով գրված ոտանավոր-
ապագրեց Ն. Զարյանը:

Դու թովչական քո քնարով
ժողովրդի բանակն անցար,
Արքայի հետ անդարձ խոսով
Պուզաշովին մտերմացար:

.....
Տեսար այստեղ հոգով պայծառ,
Բայց կաշկանդված մի ժողովուրդ,
Տխուր ժպտով դու բարձրացար
Հայաստանի լեռները ցուրտ:

.....
Ախ, թե լինեիր հնարավոր,
(Քաղցր է ըղձալ անկարելին)
Դու զարթնեիր հանկարծ մի օր
Ստալինյան մեր օրերին...

.....
Քեզ Առաջնորդը կընդունեն,
Կրեմլի պայծառ դահլիճներում,
Քեզ հայրաբար կհամբուրեն...

*
* *

Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինն իր անմահ ստեղծագործու-
թյուններով հարստացրեց նաև համաշխարհային գրականությունը,
մի քայլ առաջ մղելով մարդկության գեղարվեստական միտքը:
Նրա երկերն իրենց առաջավոր գաղափարներով, գեղարվեստա-
կան բարձր որակով հասարակական անդենահատելի նշանակու-
թյուն են ունեցել և այժմ պահպանում են այդ նշանակու-
թյունը: Պուշկինը գրականությունը, արվեստը ծառայեցրեց ժողովրդի
շահերին: Նա զարձալ ուսու երկրի մեծագույն հայրենասերներից
մեկը, իր հանճարն ամբողջապես ծառայեցնելով ուսու կուլտու-
րայի զարգացմանը: Որպես այդպիսին նա թշնամի է անցյալի
և արդի բոլոր անասլի կոսմոպոլիտներին և հակահայրենասե-
րերին: Պուշկինը պայքարեց իր ժամանակի հակաժողովրդական,

խալարամուլ, հակադեմոկրատական ուժերի դեմ, հանուն առաջավոր, դեմոկրատական կարգերի հաղթանակի: Նա մեզանից 100 տարուց ավելի առաջ հանձարեղորեն ղուշակեց, որ Վեպրոսյի ազատագրութունը կգա Ռուսաստանից»:

Ահա այս ամենով Պուշկինն անմահ կմնա ժողովուրդների հիշողության մեջ: Պուշկինն անմահ կմնա նրանով, որ նրա մասին հարգանքով է խոսել Կ. Մարքսը, նրան սիրով կարդացել և բարձր է գնահատել Վ. Ի. Լենինը, նրան ուսւ ազգի հպարտութունն է համարում ընկեր Ստալինը:



ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

	Էջ
Ներածություն	3
Կենսագրական տվյալներ	5
Գարաշըջանը և առաջնորդ զաղափարները	9
Ստեղծագործությունների ընդգրկումը	16
Ստեղծագործությունների գեղարվեստականությունը	18
Պոեմները	24
Դրամաները	27
Եղգերի Օրհներգեր	30
Արձակը	34
Պուշկինը հայ հասարակական մտքի գնահատմամբ	37

Պատ. խմբագիր Հ. ՅԻՐԱՍ
Տեխն. խմբագիր Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբադրիչ Ա. ԱՐՁԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 18/V 1949 թ., ստորագրված է տպագրության
24/V 1949 թ., ՎՖ ՊԶՈՑՈ, պատվեր 301, հրատ. 632, տիրաժ 4000. տպագր.
3 մամ. մեկ մամուլում 34,560 նիշ:

Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան, Արտվյան 104

ԳԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒՆ. ԳՐԱԴ.



220026431

ԳԻՆԸ 1 Ռ.

